



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ի. ԱՎԵՏԱՆ

ՀԵԾԵԼԱԶՈՐԸ

ՅԵՎ

ՆՐԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

21 ՆՎԱՐՈՒՅ

ՏԵՐԵՎԱՆ
1930

1965-1966

1966-1967

1967-1968

1968-1969

ԽՈՀԱ

Պրոլետարիակ բունքը յԵղիբնիրի, միացեր

ՀԽՍՀ

Ի. ՍԱԼԻՏԱՆ

357

A 4194


ՀԵԾԵԼՈՎՈՐԸ

Յ Ե Վ

ՆՐԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

166-36

21 ԴԿԱ.ԲՈՒ.



ՀԵԾԵԼՈՎՈՐԸ ԳՐԱԴԱՐԱՆ ԳԻՒ. ՔԸՆ. ԲՈՒ.ԲԵՐ. ԽՄԲԱԳ. -ՀԲԸ. ԲԸԸ

ՏԵՂՄԱԳ. Ա. Ե.

1980

Ա. ՍԱԼԻՑԱՆ. — «Հեծելազորը և նրա մարտական աշխատանիքը».

Դրաւելիում պատմվում է Հեծելազորի կազմակերպության, նրա սպառազինման, հանդերձանքի, պատրաստության և այն խնդիրների մասին, վորոնք նա իրազործում է : Հարցերը, վորոնք դրվում են զլուխներին կից, նպաստում են նյութի յուրացմանը : Նրանք կազմված են այնպես, վոր մեկ տարբեած ծառայության մեջ յեղած ընթերցող-կարմիր բանակայինը մի քանի հարցերի պատասխանը չի գտնի այս գրքույկում, բայց նրանց պատասխաննելը, հիշելով թե ինչ և խոսվում պարապմունքների ժամանակ, կամ որումության ունանդակությամբ, այնքան ել մեծ զժվորություն չի լինի : Այն հարցերը, վորոնք այս գրքույկում թույլ են լուսաբանված, նկարագրված են «Կարմիր բանակայինի գրադարանի» սերիայի Հետելալ գրքույկներում . Ե. Շեյլեմանի «Հեծելազորի հետախուզությունը» և «Ինչպես և աշխատում մարտական հեծելազետքը», իակոբոն «Մարտական բնկեր և ձին և նրան խնամելը» :



ՀԵՇԵԼԱԶՈՐԻ ԳԱԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատերազմի սկզբին ամեն մի յերկիր մինչ իր ուժը կ'զորածողովի, կ'միատեղի և ճակատները կփռխաղը, ժամանակ անց կկենա, յերբեմն շատ յերկար, վորովհետեւ յերկիրը մարտական պատրաստության բերելը հեշտ չե: Բայց մարտական գործողություններն ոկսվում են պատերազմի հենց առաջին որերից: Այդ պատերազմը մղում և հեծելաղորը: Մեծ մասսաներով նա հայտնվում և սահմաններում. պատերազմում և հակառակորդ հեծելաղորի հետ, սահմում և նրան բացազատելու իր ուժերը, ձգտում և անցնել հակառակորդի կողմի թիկունքը, իսանդարել թըշնամու ուժերի զորահավաքը, դժվարացնել նրա մոտեցումն ապագա ճակատամարտերի տեղերին, թուլացնել նրան մինչեւ մարտ մանելը և այլն: Հեծելաղորն իր այդ աշխատանքով ծածկում է մեր ուժերի զորահավաքն ու հավաքը, այսինքն հնարավորություն և տալիս մեր դիմավոր ուժերին, մոտենալ և պատրաստվել մարտի և հանդիպել թշնամուն լրիվ մարտական պատրաստությամբ:

Արդաշիստանքն ի՞նչու յի վիճակված հեծելու-
զորին։ Վարովհեռեվ հեծելազորն ոժաված և նրանով,
վորովիսին մյուս տեսակի զորքերը չունեն— դյուրա-
շաբժությամբ։ Այդ նշանակում է, վոր նա կարող է
արագորեն տեղափոխվել մեկ տեղից մյուսը, հակառի
մի տեղամասից մյուսը։ Կարող է թշնամու հարված-
ներից արագությամբ խուսափել, հաճախ յերեվալ
այնտեղ, վորանգ թշնամին նրան չի սպասում, կարող
է հետապնդել նրան։ վորքան ձիւ ուժերը կներեն։

Դյուրաշարժությունը— զլխափորի և հեծելազո-
րում, և մեր կարմիր հեծելազորն արգեն կարողացավ
ցույց տալ այդ բանը քաղաքացիական կովին ավելի
շուտ և ավելի փայլուն կերպով, քան ցարական հեծե-
լազորը և մյուս բանակների հեծելազորերն համաշ-
խարհային պատերազմի ժամանակ։ Յերր 1929 թվի
ապրիլին լեհերը գալաճանուրեն հարձակվեցին մեղ
վրա, մեր կարմիր բանակները թուրացել եյին Դենիկի-
նի հետ մղած մարտերում, չկարողացան միանդամից
պաներին ցույց տալ ուժեղ գիմազըռություն։ Այդ
պատճառով լեհերին հաջողվից մայիսի 6-ին գրավել
կիեվը։ Սակայն, նրանց հրճանքը յերկար շտեղից։
Նրանց զեմ ուղարկվեց մի ահեղ ուժ, ընկ Բուդյոննու
ամրող ձիափոր բանակը։

Թշնամուն հարվածելու համար, կարմիր հեծելա-
զորը, պետք և Հյուսիսային Կովկասից զնար լեհական
ճակաաը։ Ճիշտ և յերկաթուղով ամբողջ ճանապարհը
կարելի յեր զնալ մի քանի որում, բայց մեր յերկաթու-
ղին այն ժամանակ խորտակված և քայլայված էր, և
այդ ինդիքն իրազօրծել չեր կարող։ Կաբմիր հեծելա-
զորը Դոնից մինչեվ Դնեպր գետը շարժվեց յերթով։
Ետ կատարեց իր հոչակափոր անցումը հինգ շարթում,

մի սուտկայում անցնելով 50-60 կիլոմետր, և յերբ լեռական ճակատ հասավ, չնայած անցման բոլոր դժվարություններին, այնպես լավ և առույզ վիճակում եր, փոք առանց հանգստանալու միանգամից մարտի մըտավ¹⁾: Նա ճեղքեց լեռական ճակատը Սկվիրի քաղաքի մոտ, քչեց պաներին հեռու և այդպիսով փրկեց եռհրդային Ռւկրայնան կտակիտալիսուական լծից: Այդպիսով դյուրաշարժությունը հնարավորություն տվեց տեղափոխվել յերթով, վորապիսին մյուս ամեն տեսակի զորքերի ուժերից վեր կլիներ, և հնարավոր բարձրեց հաբկալոր բողեյին համել ճակատ, հնարավորություն տվեց ջարդել թշնամուն և քշել Ռւկրայնայի սահմաններից:

Հեծելազորի այդպիսի դյուրաշարժությունը կախված է նրանից, վոր նրա գլխավոր հիմքը— դա ձին և: Վորքան լավ, աշխույժ և առույզ, և ձին—այնքան բարձր և հեծելազորի դյուրաշարժությունը:

Սակայն, բացի դյուրաշարժությունից, ձին հեծելակին տալիս և նաև արագություն և սրբնթացություն (չեշտակիություն): Լրիվ սրբնթացված քշելով, այսինքն դնալով ձիու ամբողջ թափով, հեծելազորը կարող և արագ և սրբնթաց մտնել հետեւակի գնդակոծած տարածությունը, չտաղ համել թշնամու հրածիղներին և գնդացրողդներին, սրբնթացությամբ, ահազ տեսքով և ուժեղ «ուռ-

1) Կարմիր հեծելազորի լեռերի հետ ունեցած պատեհազմի ժամանակ գործողությունների մասին կարելի յէ կարդալ «Կարմիր բանակայինի գրադարանի» սերիայի գրքույկները. Ս. Կլյուն, առաջին հեծյալ բանակը և ն. Կակուրին, պատերազմ սպիտակ լեռերի հետ: Գիշ 1927:

Եկան վիսուալիզե լեռտուրացա միլիոն



սայտվ» թշնամու վրա սարսափ տարածել և ստիպել
նրան ցնցվել:

Այսպիսով, ուրեմն, հեծելազորը կարող է զբռհել
հեծյալ շարքում և հարգածել թշնամուն սրազենով:
Դա հեծելազորի յերկրորդ զլիսավոր հատկություն է:
Որա համար, ինչպես և դյուրաշարժության, դարձյալ
հարկավոր են ձիու արագությունը և սրբնթացությու-
նը: Կրկին մենք առանում ենք թե հեծելազորի համար
վորքան թանկ և նրա առաջին և անփոխարինելի ըն-
կեր— ձին:

Ի՞նչ է տեսնում և զգում ամեն մեկը, վորի վրա յե
ռազզված հեծելազորի գրոհը:

Ամենից առաջնա տեսնում է ձիերի հսկայական խմբեր
(մասսաներ), վորոնք մարտի դաշտում վայրկենաբար
բուժնում և շարժվում են առաջ մեծ վոստյուններով:
Մի րոպե— և նրանք արգեն մոտ են: Թավ (խիտ) փո-
չու ամպերի միջին տեսնել կարելի յե առանձին ձիե-
րին կատաղի քելքով, ձիավորներին՝ կոացած բաշերի
վրա և կարծես թե ըրջապատճակած լինեն փայլատակող
կայծակներով: Լոելի յե աղաղակ, վորը հիշեցնում է
տհեղ շառաչ, ծանր դոփյուն, վորից ցնցվում և գետի-
նը, և յերկուղը սողոսկում և սիրտը: Դարձյալ մի բռ-
պե, և թվում ե, թե արգեն վոչ մի փրկություն չկա-
այդ կատաղիորեն գլորվող ձյունակույտից:

Վախը— առաջին զգայությունն ե, վորպիսին ըդ-
դում և յուրաքանչյուր վոք, ով տեսնում է հեծելազորի
գրոհը: Լեհական սպա, գնդապետ Կլեբերգը, այսպես
և նկարագրում ընկ. Բուդյոննու հեծելազորի 1920
թվի հունիսի 5-ի գրոհը լեհերի վրա, այսինքն՝ նրա
կողմից լեհական ճակատի պատռումի որը.

«Հայափ մարտի բոպեն— պատմում ե Կլեբերգը, —

և ամբողջ ձիավոր բանակի հակառակ, վար մինչ այդ հանգարտ եր, Հանկարծ կենդանանում և : Բարսր անտառներից, ոյուղերից և վայրի խորշերից հայտնվում և հակառակորդը : Մի քանի ակնթարթում մարտի ամրող հսկա տարածությունը, վորքան ահօնում և աչքը, հեղեղվում և ձիավորներով, վորոնք փոշու ամպի միջն, զրահապատ ավտոմոբիլներն առաջներին, ծածկված հրետանու, սայլակների և ձիավոր հրածիղների կրակով, սկսում են շարժվել լեհերի վրա : Լեհական զինվորը, վորբ հայացքն ուղղած գիտում և այդ արագ շարժվող ամպերը, զգում և, վոր նա կովում և հսկայական ողակի կենտրոնում, վարը շուտով փակվելու յի իր յիշելիք : Պարզ կարելի յի պատկերացնել, թե նա այդ ժամանակ ի՞նչ և զգում . նրա գիմադրական կարողությունն ընկնում և, և այդ ժամանակ նրա միակ ցանկությունը — փրկվելու ցանկություն և, ոնհետանալ մարտի գաշտից» :

Ցեվ լեհական բանակն իսկապես սկսեց փրկություն փնտուել, այսինքն՝ զիմեց փախուստի, այնինչ լեհական զինվորը սպառակ լեհերի մեր հետ ունեցած պատեցազմում վատ կովող չեր : Նա լավ զինավարժված եր, հիանալի սպառապինված՝ լեհաստանի արելմայան դաշնակիցների կողմից : Նա գեռ չեր հառկացել պաների և կապիտալիստների խարերայությունը և հավատում եր, վոր կովելով ԽՍՀՄ հետ, նա կովում և արդար գործի համար : Նա կարող եր ցույց տալ և ցույց ավեց հսկայական զիմադրությունն, սակայն, այդպես և հեծելազորի հատկությունը — իր տեսքով սարսափ տարածել թշնամու վրա, նույնիսկ տոկուն թշնամու :

Այսպիսով, հեծելազորի հետելլալ հատկությունն

այն է, վոր նա իր սրբեթաց ձիավար գրահով քշեամբ
վրա սարսափ և տարածում, սորիպում և նրան սարսէլ,
իսկ այն թշնամուն, վորը սարսեց հեծելազորի առա-
ջն՝ փրկություն չկա: Նա հեծելազորից չի խուսափի:
Հեծելազորը թույլ չի տա նրան վո՛չ կանդ առնել, վո՛չ
շոկվէլ, վո՛չ իր ուժերը հավաքել գիմաղբության հա-
մար: Նա մի քանի բովելում դառնում և դաշտի լրիվ
տերը:

Ի՞նչ և պետք, վորպեսզի ավելի ուժեղ ցնցել թը-
նամուն, վորպեսզի նրան ավելի շատ վախեցնել, վոր-
պեսզի նա շուա գողա և փախչի:

Լայն սրարշավ (Ճիռ ընթացքը, քելքը), բարձր
«ուսուա», ամուր հարված, և զրոհի ժամանակ վոչ մի
զեպքում հապաղէլ: Յուրաքանչյուր հապաղում կիսքա-
խուսի թշնամուն: Նա ուշքի կզա և նոքից բաց կանի,
այս անդամ շատ ավելի ստույգ կրակ: Ռւստի և հեծե-
լազորն ամեն տեսակ ձիավոր զրոհ, կանդ շատնելով
փոշ մի տեսակ կորստի առաջ, անպայմանորեն պետք և
հասցնի մինչեվ հարվածը, լրիվ կերպով ողտաղործե-
լով իր արագության և սրբնթացության հատկություն-
ները:

Սակայն, պատահում և, վոր թշնամին վստահում
և իր ուժերի, իր զիրքի, իր կրակային միջոցների վրա,
և հեծյալ գրոհով այն վերցնել չի կարելի: Թշնամին
թույլ չի տալիս հեծելազորին իրեն մոռենալ հարվա-
ծի համար: Այդ զեպքում հեծելազորն ի՞նչ և անում:

Հեծելազորը ձիաթափ և լինում, այսինքն՝ Չաք-
ցնում և անվտանգ տեղերում ձիերին, զեպի զիրք և
տանում իր թնդանոթները, զնդացիրները: Մրանք
թշնամու զիրքերին և ամրացրած կետերին կրակ ևն
բաց տնում:

Զին այս տեսակ թաքցնելով հեծելազորը հարձակվում է, ինչպես հետեվակը, մինչեվ այնքան ժամանակ, քանի դեռ դեսպան այնպես չի գտնավորվի նորից ժի հեծնելու:

Այժմյան պատերազմում հեծելազորը մեծ մասամբ արդպես ել պետք է զործի, այսինքն՝ մարտ վարել փոփոխակի յերբեմն հետեվակ շարքում, յերբեմն ձիավոր շարքում, այլ կերպ տասած— վարել խառը մարտ ինչպես զիտությունն և ասում, — համակցած մարտ:

Հեծյալ մարտի համար հեծելազորն ունի ձի և սրապեն: Զիաթափված մարտի համար— հետեվակի զենքը, հրացան, նոնակ, զնդացիք և հրետավորի զենքը— թնդանոթը: Հեծելազորի այս բոլոր միջացները հետեվում են մարտի դաշտ միշտ նրա հետ միատեղ: Այդ պատճառով, հեծելազորը կարիքի գեղքում կարող է միշտ մարտի բոնվելը, ցանկացած բովելին, չսպասելով ուրիշ զորքերի սժանդակության: Այդ նշանակում է, վոր հեծելազորը բոլորովին ինքնուրույն է իր զործողություններում: Այդ ինքնուրույնությունը— հեծելազորի շուրջնպիսի կարեվոր հատկությունն է, ինչպես նրա դյուրաշարժությունը, արագությունն ու սրբնթացությունը:

Հեծելազորի այդ բոլոր հատկությունները, վորոնք այստեղ թվեցինք, նրան հնարավորություն են տալիս ի կատար ածել ցանկացած մարտական խնդիրները, վորպիսիները կարող են նրան տրվել մարտական պարագայում: Դրանք— լավ կամ, ինչպես ասում են, դըրական հատկություններն են: Բայց բացի սրանցից հեծելազորն ունի և թույլ կողմեր կամ, ինչպես ասում են, բացասական հատկություններ :

Դրանք հետեյաներն են.

Հեծելազորն ամեն ժամանակ չի կարող աշխատել :
Նրա համար որինակ, դժվար ե կովել գիշերը, ուժեղ
անձրեսի՝ ժամանակ, ճմեռը, յերբ դաշտերը ծածկված
են խորը ձյունով :

Կովել բառի տակ— այստեղ պետք ե հասկանալ,
ի հարկե, հենց մարտի վարելը, վորովհետեւ գիշերը,
իամ մառախուղը շատ ձեռնտու յեն հեծելազորին այդ
դործողություններում, որինակ— վորապեսղի աննկա-
տելի մոռնենալ թշնամուն, սավառնակներին, վորոնք
այժմ մեծ չափով մասնակցում են պատերազմում և հե-
տախուղության մեջ, հնարավորություն չտալ հայտա-
րերել հեծելազորի շարժումը և այլն : Բնդհակառակը, իր
բաղմաթիվ խնդիրներն ի կատար ածելու պատրաստու-
թյան համար, հեծելազորն ստիպված ե շատ հաճախ
շարժվել գիշերները և նույնիսկ անձրեսի՝ ժամանակ :
Բայց կովել, այսինքն՝ հենց մարտը վարել, այդ պայ-
մաններում հեծելազորի համար շատ դժվար ե, իսկ
հեծյալ գրոհի մասին ընդհանրապես համարյա խոսելը
չարքե :

Սակայն, ասել դժվար ե, չի նշանակի անհնար և .
Ըեթե կատիպի մարտական պարագան, կարիքը կամ
մարտական խնդիրը, այն ժամանակ հեծելազորը
պետք է կովի և հաղթանակի և ձյան մեջ, ինչպես որի-
նակ՝ նուդյոննու հեծելազորը կովեց և ջարդեց սպի-
տակներին, Յեղորդիկսկայի տակ, և՛ գիշերը և՛ անձրեսի
ժամանակ, ինչպես և նա կովեց լեհական ճակատում :
Ուստի այս բանը պետք ե հասկանալ այսպես, վոր այդ
պայմաններում հեծելազորը կկովի մեծ դժվարու-
թյամբ, քան ուրիշ ավելի բարեհաջող պայմաններում :

Հեծելազոր դեկավարելը դժվար ե, վորովհետեւ
հեծելազորի մարտը յերկար չի տեղում և նա մեծ մա-


սամբ մարտի յե անցնում հանկարծակի : Հարված— և
թշնամին փախչում և , կամ— ընդհակառակը— հեծե-
րազորը ջարդված ե : Այս նկատի ունենալով , ամենա-
կարեվորն ե— ուղիղ կազմակերպել (կարգավորել)
մարտը հենց սկզբից , սխալներ չանել , վորովհետեւ
նրանց շակելը շատ զժվար կլինի , իսկ յերբեմն անհնար՝
ուզդակի ժամանակ չի լինի հեծելազորն ուղղել ձիշո
նողատակին , այսինքն՝ միանդամից նրան ճիշտ ուղղու-
թյուն տալ :



Տիմ հեծյալ բանակի հրամատարությունը . ընկ . ընկ .
Բուդյումնիյ , Շադենկո , Վորոշիլով

Հեծելազորը պահանջ ունի հաճախակի հանգստի ,
վորովհետեւ հոգնում և վոչ միայն մարտիկը , այլ և
ձին : Մարդը կարող է տեղափոխվել և չընել 2-3 որ ու :

Հանդիպելու հզկություն



դիշեր, ապա 2-3 ժամ պատկել քնել, կոծել պաթսիմաթ
և արդեն նա նորից առույր է և կրկին պատրաստ և
մարտի գնալու. Հարկավոր և միայն վոր հասկանա
զործի կարեվորությունն ու իր խնդիրները: Զին այդ
հասկացողությունից զուրկ է: Նա պահանջում է կեր
և հանգիստ անպայման վորոշ ժամանակից հետո: Ահա
թե ինչու հեծելազորի ուժերը սահմանափակ են: Շատ
հաճախ կարելի յե տեսնել, ինչպես զորամասը, վոչ թե
պնում է, այլ որորվում է, ձիերը լղար են, հազիվ են
վոտքերը փոխում: Այդ նշանակում է, վոր հեծելազոր-
ը մարտերում հյուծվել է, վոր ձիերը հանգիստ չեն
ունեցել: Իսկ յերբ հանգստանա ձին, կերակրեն,
ժաքրեն նրան, նա դարձյալ կընդունի լավ տեսք և
կրկին արծվի պես կթոշի մարտի դաշտի միջով:

Այսպիսով ուրեմն, հեծելազորի ուժերն ավելի
սահմանափակ են, քան մյուս բոլոր տեսակի զորքե-
րինը, դրա համար ել տաք մարտերից հետո ստիպված
են միշտ ել նրան յետ տանել հետու թիկունք հանգստի:

Անհրաժեշտ և մատնացույց անել և այն, վոր հե-
ծելազորը—զորքի շատ թանկ տեսակն է, վորովհետեւ
հեծելազորը դժվար է լրացնել կամ ինչպես առում են,
ձիերի կազմը նորոգել: Զին թանկ արժե, իսկ ձիավա-
րի ուսուցումն ու պատրաստությունն ավելի դժվար է,
քան որինակ՝ հետեվակի պատրաստելը:

Հեծելազորի ուժեղ և թույլ կողմերը քննելով,
փորձենք վճռել, թե արդյոք նրա բացասական հատկու-
թյունները չեն գերազանցում դրականներից:

Յեթե դուք խորասուզվեք այս հարցի մեջ, այն
դեպքում կտեսնենք, վոր այդ բանը չկա, վորովհետեւ
թույլ կողմերը չեն խանգարում նրան մարտական խըն-

զերները կատարել, այլ միայն դժվարացնում են նրա
տշի առանքը :

Յեթէ հեծելազորը զեկավարվում է հմտորեն, յեթէ նո
չի հյուծվել, յեթէ նրա ձիական կազմը պահպանվում
է սարքին, ուրեմն հեծելազորն ինչպես յեղել է, այն
ուղես ել կմնա զորքի ամենաուժեղ և ամենաանհրաժեշտ
տեսակը :

Կարգացածն ավելի լավ յուրացնելու համար, վոր-
ձեցեք ինքներդ պատասխանել հետեվյալ հարցերին .

1) Վո՞րոնք են հեծելազորի գլխավոր հատկու-
թյունները :

2) Ի՞նչ բան է համակցած մարտը :

3) Ինչո՞ւ հեծելազորի համար դժվար է գործել
դիշերը, անձրեվին, ձյան մեջ :

4) Ի՞նչ է պետք, վորպեսզի հեծելազորը պահպանի
իր անվտանգությունը :

ՀԵՄԵԼԱԶՈՐՆ Ի՞ՆՉՈՎ Ե ԶԻՆՎԱՌ

Հեծելազորը մարտ և վարում ինչպես հետեւակ
նույպես և հեծյալ շարքում, ինչպես սրազենով, նույն-
ողես և հրազենով : Ուստի և նա հարուստ և սպառազեն-
քով :

Սկզբից նայենք սրազենը—հեծելակի գլխավո-
զենքը : Սա կազմված է թրից, նիզակից և սվինից :

Թուրք նշանակված է գլխավորապես թշնամուն
կտրելու, բայց մարտիկները յերթեմն գործ են ածում
այն նաև խիթելու (ծակելու) համար : Թրով խիթում են
այն դեպքում յերբ մարտիկը նիզակ չունի ծեռքին, իսկ
թշնամուն պետք է հանել որինակ՝ ցանկապատի, թիգու-

նոթի յեակում, իրամասառամ կոմ սովորմ թաքնված տեղից :

Հարկավոր և մեծ ճարագիտություն ունենալ և կարողանալ լավ ձիավարել, ձիու վրայից թրով ազատ դործելու համար։ Աւստի և մարտիկները խազաղ ժումանակ շատ յերկար պատրաստվում են վարժվելով զալար ճյուղեր կարտառելու, կազի և խրավիլակի վրա։ Թրի չողչազուն բերանն ողնում և սարսափ ապրածել հակառակորդի վրա, վարավհետեւ հեծյալ դբուհի ժամանակ թրերը չողչազում են, ինչպես կայծակ, և կարծես թև մարտիկներին շրջապատում են կրակի ողակով։ Թրով գննված են հեծերազորի մարտիկներին և հրամկագրով։




Սրամարտության դաս (Գործադրություններ ըստվ) :

Նիզակը գլխավորապես դործագրում են հեծյալ
շարքով գրոհի ժամանակ թշնամու հեծելազորի վրա,
և նրանով զինված ե միայն առաջին տողանը։ Ճարտար
և ճարպիկ մարտիկը միշտ կարող է նիզակը դործագրել
և դիմացը պառկած մարտիկի, և կանգնած հետեւակի

զիմաց, և սայլի, թնդանոթի, ցանկապատի յետեռւմ, առվում կամ խրամատում թաքնված-հակառակորդի մարտիկի, դիմաց :

Նիզակով կարելի յի, վոչ միայն հարձակվել, այլ և պաշտպանվել : Յեթե, որինակ, նիզակով զինված մի մարտիկի վրա, հարձակվել են թրերով զինված մի քանի մարդիկ և նա ցանկանում է նրանցից հեռանալ, ազատվել, այս գեղքում հեռանալու ամբողջ ժամանակ արտղ պատում և նիզակին իր չորս կողմը, թույլ չտալով հալածողներին իրեն մոտենալու :

Նիզակին տիրապետելն ավելի գեղաբ է ; քան թրին, այսուեղ պետք է ունենալ մեծ վարժություն և ճարտու-



Արգելվներից վոստնելը

բություն, ուստի և մարտիկների ուսուցումը նիզակին տիրապետելու գործում պահանջում է շատ ժամանակ : Անտառով անցնելիս, հետախուզությունում, դետքում,

պահպանական ծառայությունում, զեկուցագիր տանելիս, ձի հեծելիս և իջնելիս նիզակը հաճախ խանգարում է մարտիկին. նա ծանրացնում է ձիու բեռի ընդհանուր քաշը: Վերջապես նիզակը խիստ անհանգիստ և անում ձիապաններին ձիաթափավելիս: Սակայն նիզակին ինչ ել լինի—ոգտակար, անհրաժեշտ զենք է, այդ պատճառով և վոչ մի բանակի հեծելազոր չի կաբողացել հրաժարվել նրանից:

Թուրն ել, նիզակն ել գործադրվում են ձիու վրայից, այնինչ հրազենը, վորն այժմ մենք կնայենք, հետեւակ կռվի համար և: Հատկապես նրա շնորհիվ ել հեծելազորն ինքնուրույնություն ունի, վորի մասին մենք արդեն խոսել ենք: Հրազենին են պատկանում հրացանը, ձեռքի և հաստոցի զնդացիրները, ատրճանակը:

Հրացանը հարկավոր է հետեւակ մարտի համար այն պատճառով, վոր ձիու վրայից հրաձդություն տեղի չի ունենում, իսկ յեթե տեղի յել ե ունենում, վոչ մի դեպքում դիպուկ չի լինում¹⁾:

Հետեւակ մարտն ի՞նչեց և կազմված: Կրակից և առաջ շարժվելուց: Իրենց կրակի պաշտպանության տակ մարտիկները մոտենում են թշնամուն և ապա գրոհում են նրան: Այդ կրակը մղելու համար յուրաքանչյուր մարտիկ զինված և հրացանով: Մեր հեծելազորի կամ ինչ-

¹⁾) Հրացանի, նրա մարտական հատկությունների, նրա խնամելու և նրա անսարքությունը հեռացնելու մասին կարելի յե մանրամասն կարդալ «կարմիր բանակայինի գրադարանի» սերիայի հետեւյալ գրքերում: Ա. Բելով—Հրացանն և նրա խնամքը և Նիկիֆորով—Անսարք Հրացանը, Հրատ. 2. Գիդ 1927, 1928:

պես կոչում են դրագունական հբացանը հետեւակի հբացանից մի քիչ կարճ ե : Նրա քաշն առանց սվինի մոտ 31/2 կիլոգրամ ե . նրա յերկարությունը սվինով 11/2 մետր ե , առանց սվինի մոտ մի մետր : Նա լցում ե ինչպես և հետեւակինը հինգ փամփուշտով : Փորձված ե ճարպիկ հրածիղը նրանով նախատակին խփում ե 10-12 գնդակ մի բոպեյում առանց դժվարության : Նա ունի նշանոց մինչև 3200 քայլով , բայց գնդակը թռչում ե ավելի հեռուն-մինչև 5500 քայլ : Սակայն այժմ ընդունված ե , վոր հբացանից կրակ վարելու համար գնդակի թռիչքի այդ տեսակ մեծ հեռավորությունը համարյա հարկավոր չե : Այժմ հբացանը հաշվվում է մոտիկ մարտի զենք , այսինքն նրանով կրակում են 400-800 քայլ տարածության վրա թեև հասկանալի յե , առանձին դիպուկ հրածիղը մենակ կրակի ժամանակ խփում ե և մեծ տարածության վրա :

Ամեն մի մարտ վերջանում է գրոհով , այսինքն հարվածել թշնամուն սրազենով : Հետեւակը վերջադնում է մարտը սվինամարտով : Հետեւակի հբացանի սվինը միշտ հազցրած են կրում : Սվին ունի և հեծելազորի հբացանը և գործադրում ե այն դեպքում , յերբ հեծելազորը գրոհում ե հետեւակ շարքով : Բայց սվինը խիստ յերկարացնելով հբացանը , ճնշում ե հեծելակին , նրա բոլորը աշխատանքներն այլ դեպքերում , որինակ՝ ձիու վրա աշխատելիս , այդ պատճառով սովորաբար հբացանին են հազցնում ձիավորի ձիաթափի լինելու դեպքում : Մեացած ժամանակ այն կրում են թրի պատյանի վրա , վորաբեղ նրա համար հատուկ բուն կա :

Հետեւակ մարտում գործ են ածում նույնպես ձեռքի նունակները : Մրանք կարող են հեծելազորին մեծ ծառա-

յություն մատուցել գյուղերը դրսէելիս , յերբ հեծելա-
զորը հարկադրված է կռվել քաղաքներում կամ յերբ
նա պաշտպանվում է , վորովհետեւ նոնակները կարող
են հարվածել այնպիսի նպատակները , վորոնք մատչելի
չեն հրացանին և դնդացրին , որինչակ՝ յերբ թշնամին
թագնվել է խրաժատում , քարե ցանկապատ ունեցող
տանը և այլն : Նոնակներով կարելի յե նույնապես պայ-
թեցնել յերկաթալարերը , տանկերը , դրահապատները ,
թնդանոթի փողաբերանները , շողեկառքերն և այլն :
Ուժեղ մարտիկը կարող է աղատ նետել նոնակը 50-60
քայլ : Նոնակների տեսակները (սիստեմները) շատ—շատ
են , սակայն հեծելազորում ընդունված է մեծ մասամբ
1914 թվի տիպարի նոնակներն և Միլսի սիստեմինը ,
իսկ յերկաթալարերը պայթեցնելու համար—Նովիցիու
սիստեմինը : Յուրաքանչյուր հեծելակ կրում է 2 նրո-
ւակ¹⁾ :

Հրացանը , նոնակները , թրերը և նիզակը—յուրա-
չանչյուր առանձին մարտիկի պատկանելիքներն են
(պարագաները) : Դա—անձնական զենքն է , կամ այլ
կերպ անվանում են անհատական (ինդիվիվուալ) : Մեր
հեծելազորում մարտիկը հրացանը կրում է մեջքին փո-
կով , թուրք նույնապես փոկով աջ ուսին : Յերթի ժամա-
նակ ձիու վրա նիզակը հազնում են սրետիքով (ողակ նի-
դակարնի մեջտեղում) աջ ձեռքին , իսկ մի ողակ (ճյու-
մագ) (ողակ նիզակի ցածր բութ ծայրին) . հազցնում են
աջ վոտի թաթի ծայրին :

¹⁾ Նոնակների և նրանց գործողությունների մասին
ժանրամասն կարելի յե կարդալ Ի. Սամոյլովի , «Հու-
շատետը նոնակային գործի մասին» , կարմիր բանակա-
յինի գրադարանի գրքույկում . հրատ . 1924 թ . և Ա .
Ալեքսանդրովի , «Ինչպե՞ս գործել ձեռքի նոնակներով» .
ԽՍՀՄ պաշտպանությունը , սերիայից :

Ոտարերկրյա մի քանի բանակներում հեծելազորուժ
հրացանը և թուրք կամ սուսերը (սանլյա) կապում են
թամքին : Դա ունի իր հարմարությունները, վորովհեաւե
չի ճնշում մարտիկի շարժումները, բայց յեթե մարտիկը
դրկվի ձիուց, որինակ՝ մարտի ժամանակ նրանից վեր
ընկնի, կմնա բոլորովին առանց զենքի : Զիաթափի լինե-
լիս դա ել դժվարություններ և առաջացնում և ժամա-
նակ վատոնում :

Հեծելազորում հեռավոր մարտի զենքը հանդիսա-
նում են զնդացիրները : Դա-դասակի, ջոկի կամ ընդ-
հանրապես մարտիկների ամբողջ խմբի զենքն ե, ուստի
և այն կոչվում ե խմբակային :

Զեռքի գնդացիր կամ այլ կերպ-թեթև գնդացիր :
Այդ անսակ գնդացիր կա յուրաքանչյուր դասակում և
այժմ սովորաբար կրում են բեռում : Սակայն, քաղա-
քացիական պատերազմին, բեռներ չկային, ուստի և
թեթև գնդացիրներն ըստ մեծ մասին կ բանակացին-
ները կրում ենին հենց իրենց մեջքին, ինչպես հրացանը :
Մանր եր, վորովհետեւ կշռում ե 14 կիլոգրամ, բայց
սովորեցին :


Զեռքի գնդացիրը հարմարեցված է 1000-1200 քայլի
վրա հրաձգության համար : Լցվում ե 47 փամփուշտ,
խփում և շատ դիպուկ, ծայրահեղ դեսլքում մի մարդ
կարող և սպասարկել, հեշտությամբ վերալցնել կարելի
յե : Գնդակը թռչում ե նույնապես հեռու, ինչպես հրա-
ցանից, չնայած սրա նշանոցը միայն 2600 քայլ-ե : Զեռքի
գնդացը կարելի յե մի բոպեյում արձակել 260 գնդակ,
այնպես վոր նրա կրակային ուժը շատ մեծ է :

Ամեն մի գնդացիր ունի խափանումներ, այսինքն հան-
կարծ մի վորեւե պատճառով դադարում և դործելուց :

Մեր ձեռքի գնդացիրն այդ ահսակ խտիանումներ չառ
քիչ ունի, իհարկե, յեթե նրան լավ խնամեն, խնամքով
մաքրեն և պահպանեն :

Հաստոցավոր գնդացիր—արդեն բավական ծանր զենք
ե, ուստի նրանից վոչ միայն դասակը չունի, այլ մինչեւ¹
իսկ հեծելավաշտը, կա միայն գնդում : Յուրաքանչյուր
գնդում կա գնդացրային հեծելավաշտ, վորն ունի
16 հաստոցավոր գնդացիր : Նրանք տեղափոխում են
առանձին սայլակներով, վորոնք կոչվում են գնդացրի
սայլակներ :

Մեզ մոտ, հեծելազորում կա Մաքսիմի գնդացիրը,
ճիշտ այնպիսինը, ինչպիսին կա հետեւակում : Նրա
ծանրությունը հաստոցավ-56 կիլոգրամ է, կարող է հրա-
ծգել $3\frac{1}{2}$ կիլոմետր տարածության վրա, լցվում է ժա-



Գնդացիրը սայլակի վրա, վորք պատրաստված է լողալով անցնելու
համար : Աթիվներից կախված են լողանները :

պավեններով յուրաքանչյուրը 250 փամփուշտով և կա-
րող է մի բոպեյում բաց թողնել 500 գնդակ :

Մաքսիմի զնդացիրն ամենաքիչը 2 մարդ սպասարկողներ և պահանջում՝ նշանառու և ողբական։ Բացի որանից յուրաքանչյուր զնդացիր ունի զնդացըի պետ, զիտող, փամփշտակիրներ և ծիալաններ։ Թեև դասակում և հեծելավաշում Մաքսիմ չկա, բայց մարտում նրանց շատ հաճախ տալիս են զնդացիր։ Մաքսիմը շատ ուժեղ զինք է, նաև հեծելազորին մեծ ծառայություն և մատուցում։ Հարձակման, պաշտպանության, նահանջի ժամանակ, մինչև իսկ յերբ հեծալազորը գրոհում և հեծյալ շարքում, այդ ժամանակ ել նրա կողքին՝ մի անկյունում աեղավորվելով իր ուժեղ կրակով խանդարում և թշնամուն գնդակոծել մեր հեծելազորին։

Մեր Մաքսիմի պակասությունն այն է, վոր ինչքան նա ողտակար է, այնքան ել քմահաճ է, նա շատ տարբեր խափանումներ ունի։ Մարտի ամենասաք րոպեյին նա էարող է կանգ առնել և դադարել կրակելուց։ Սակայն դրանից կարելի յե խուսափել, յեթե նրան լավ պահեն կեղտուտվելուց և մասերը շաղ տալուց, փոշուց և անձրևից ծածկել, հաճախ մաքրել։

Ինչպես տեսանք, հեծելազորը զինված և ծիավոր, հետեւակ և կրակային մարտի համար շատ պինդ։ Բայց ցանկացած մարտական ինդիրն ի կատար ածելու համար, նրան, ինչպես և հետեւակին հարկավոր են ոժանդակ և տեխնքական միջոցներ թշնամու տեխնիկայի դիմաց։ Հեծելազորն այդ միջոցներից բավարար քանակով ունի, բայց դրանց մեծամասնությունը տարբերվում և այդ նույն տեսակ միջոցներից, վորոնք ոգնում են հետեւակին մեծ թեթևությամբ և մեծ դյուրաշարժությամբ։

Դա այլ կերպ լինել չեր կարող, վորովհետեւ բոլոր

այդ՝ միջոցները պետք եւ հասնեն հեծելազորի հետեւց, յինհն նրա ձեռքի տակին :

Տեխնիքական միջոցներից հեծելազորի ունի հրետանի, զրահապատ ավտոմոբիլներ, ավիացիոն գիտելիա :

Հրետանի կա միայն հեծյալ գիշիղիաներում, բայց նա զործում է զնդերի հետ, իսկ սակավ գեղքերում տուանձին թնդանոթներով նույնիսկ հեծելազուտերի հետ։ Յերեք դյույմանոց մեծ հեծելական թնդանոթները, վորոնցից գիշիղիայում 12—15 հատ և թեթև են հետեւակի թնդանոթներից և ամբողջ սպասարկողները գնում են ձիով, վորից և հեծելազորի հրետանին կոչվում ե «ձիավոր»։

Հրետանին ի՞նչպիսի ծառայություն կարող է մատուցել հեծելազորին :

Մենք արգեն գիտենք, վոր հեծելազորին ամենամեծ լինաը հասցնում են թշնամու զնդացիքները։ Մեկ կամ մի քանի զնդացրեր, հաջող կերպով դնելով վորեւ աեղ՝ կամքջի վրա, ճանապարհի մոտ, նեղ տեղում, ընդունակ են կասեցնել և մեծ դորամաս։ Իսկ վորովհետնիվ այդ զնդացրերը բավարար չափով ծածկված են սուստի և զնդակով չի կարելի նրանց վերցնել։ Այդ զեպքում սպնության են հասնում թնդանոթները։ Նոքա զործում են շատ արագ «բոտ հեծելազորի»։ Ամբողջ մարտկոցով սուրում են դիրքերը և կրակ են բաց անում դեպի զնդացիքները։ Հենց առաջին հաջող կազցնելուց հետո, զնդացիքները կրակը դադարեցնում են և հեծելազորն հնարավորություն է ստանում առաջ շարժվելու։ Այսպիսով, հեծյալ հրետանին ծառայում ե այն բանին, վորպեսզի կովի հակառակոր-

դե կրակային կետերի գեմ, վորպեսզի լւեցնի նրա դըն-
դացիքների և հրետանու կրակր և ոժանդակի մեր հե-
ծելազորի գրոհին :

Հեծյալ հրետանին ել նույն գլխավոր Հատկու-
թյունն ունի, ինչպես և հեծելազորը, այսինքն՝ նա յել
այնպես գյուրաշարժ և և կարող և այնպիսի անցումներ
անել, ինչպես և հեծելազորը : Այդ բանի չնորհիվ հեծ-
յալ հրետանին յերբեք յետ չի մնում հեծելազորից,
միշտ նրա հետ և և միշտ ողնում և նրան մարտուց :
Իսկ նրա ոգնության կարիքը հեծելազորը միշտ զգում
և, վորովհետեւ ուժ հետ ել նա կովելու լինի,
միշտ գործ կունենա հակառակորդի դնդացիքների
հետ, վորոնց կրակը մարելն ավելի հեշտ և հրետանու-
դիպուկ կրակով : Հրետանին իր առաջին քարշակներում
և ոմբարկղներում այնչափով պահունի արկեր ունի,
վորոնք նրան բավական են մի որվա տաք կովի համար :
Այդ բավական և, վորովհետեւ հեծելազորը, ինչպես
մենք արդեն գիտենք, տեսլական կոիվ չի մղում :

Զրահապատ ավտոմոբիլներ, կամ այլ կերպ ալ-
տոմոբիլները, վորոնք չորս կողմից պատած են
ոլողատե պատերով և վորոնց սովորական զնդակը չի
օակում ¹⁾, հեծելազորի ամենաանհրաժեշտ միջոցն և :
Եերբ հեծելազորը գրոհում և, զրահապատը նախա-
պատրաստում և այդ գրոհն իր գնդացիքների կրակով,
առաջ նեռվելով, իսկ հետո գրոհում և հեծելազորի հետ

1) Զրահապատ ավտոմոբիլների աշխատանքների և
նրանց կազմության մասին մանրամասն կարելի յե
կարդալ ընկ . Եսբախի «Զրահապատ գնացքներն և զր-
րահապատ մեքենաները» գրքույկում, «Կարմիր բանա-
կայինի գրտղարանի» սերիայից 1926 :

թշնամուն : Համախի մի քանի զբահապահներ արշավում
են հակառակորդի հետեվակի վրա և գեմ առ զեմ զըն-
գակոծում են իրենց զնդացիրներից , այլպիսով իրենց
հեծելազորի համար ճանապարհ են բաց անում :

Զբահապահներն ամենից շատ լավ են հետախուզու-
թյան ժամանակ . որինակ յերբ հարկավոր և ներս խու-
ժել գյուղ կամ քաղաք : Այս դեղքում հեծելազորին
կարող են զնդակոծել կտուրներից , լուսամուտներից և
փողոցներից : Զբահապահն այդ տեսակ զնդակոծու-
թյունից չի վախենում , վորովհետեւ նա զնում և շատ
արագ և հուսալի պաշտպանված և զնդակներից :

Քաղաքացիական պատերազմի ժամանակ , յերբ
հեծելազորն ստիպված եր հաճախ կովել քաղաքներում
և դյուզաքաղաքներում , զբահապատ ավտոմորիները
հատկապես իրենց ցուցահաննեցին , ցույց տալով հեծե-
լազորին մեծ ոգնություն : Գեներալ Վրանգելի սպի-
տակ բանակի հետ Ուկրայնայի հարավում և Ղրիմում ,
կովելու ժամանակ , զբահապատ ավտոմորիները , որին .
ճանապարհ ել չեյին վնտում և զործում եյին խոսպան
զաշտերում , վորովհետեւ այստեղ կոխվը մղվում եր
լայն տափաստանների շրջաններում , վորտեղ վոչ ճա-
հիճ , վոչ անտառ կար , և վոչ մի տեսակ խոչընդոտներ
չդժվարացրին նրանց գործողությունները : Ող-
նեց և այն բանը , վոր աշուն եր , հացի բերքը զաշտե-
րից հավաքված եր , զաշտերը զեռ ևս վարված չեյին ,
իսկ գետինը թեթե կերպով սառած եր , այսինքն պինդ
եր : Այս տեսակ գետնով զբահապատները կարող եյին
ազատ շարժվել համարյա նույն արագությամբ , ինչպես
հիանալի ճանապարհներով , այսինքն 15-20 կիլոմետր
մի ժամում :

Զրահապատի թույլ կողմն այն ե, վոր ինչ ել լինի նա խիստ կերպով կախված ե ճանապարհներից: Առանց ճանապարհի նա վատ ե շարժվում, ծանր ե ե թաղվում և գետնում: Սակայն, ամենից շատ զրահապատը վախենում է հրետանուց: Յեթե հեռվից կրոկեն, իհարկե գժվար ե կպցնել նրան, վորովհետեւ չե՞լոր նա ամբողջ ժամանակ շարժման մեջ ե: Սակայն շատ հաճախ իմանալով, վոր զրահապատն անց ե կենալու փորհիվն ճանապարհով, հակառակորդն այդակա մի հարմար տեղում թադցնում ե թնդանոթը, սուածուց ճիշտ ուղղված այն տեղին, վորտեղից զրահապատը պետք ե անցնի¹⁾:

Այդ թնդանոթը համբերությամբ սպասում ե, ուշադրություն չդարձնելով ուրիշ խարուսիկ նպատակներին, բայց հենց զրահապատը մոտենում ե, նա նրան մեկ-յերկու ձիգերով տապալում ե: Վորպեսպի այդ բանը չպատահի, պետք ե շատ դպուշ գործել ե, գլխավորը, միշտ դիտել շուրջը, ծուղակի մեջ չընկնելու համար:

Զրահապատ ավտոմորիներ կան ամեն մի հեծյալ դիվիդիայում, բայց գործում են նույնպես զնդերի հետ, իսկ յերբեմն հեծելավաշտերի հետ: Յուրաքանչյուր զրահապատում կան մեկ, յերկու հաստոցավոր զնդացիրներ, իսկ մի քանիսում— գնդացիր և վոչ մեծ թնդանոթ:

1) Այդ ձևով թաքցրած թնդանոթը, վորն ուղղված ե վորոշ տեղի, կոչվում ե դաշունական հրանոք: Ենում են նաև դաշունական դնդացիրներ, վորոնք դրվում են վորեւ նեղ անցքում, կիրճում և ընդհանրապես այնպիսի տեղերում վորոնցից հակառակորդը չի կարող չանցնել:

Ավիացիան շատ ավելի յէ ողնում հեծելազսրին, քան մյուս տեխնիկական միջոցները : Նրա ինքնաթիռները թոշում են թշնամու թիկունքը, հետախուզում են նրան և տեղեկացնում են հեծելազորին այն բոլորի մասին, ինչ կատարվում է այնուեղ : Շատ հաճախ ավիացիան հեծելազորի հետ գրոհում է թշնամուն . հեծելազորը զետնից, ավիացիան— ողից : Այդպիսի միասնական գրոհումը— ամենասարսափելին է թշնամու համար : Նրա ուշագրությունը յերկատվում է, նա չի կարողանում հետեւել և՛ յերկնքին, և՛ գետնին, չի կարողանում իր հրետանին դործի զնել, վորովհետեւ ինքնաթիռները սավառնում են նրա դիմի վերեվում, չի կարողանում կշռագատել և ի կատար ածել իր մոտերությունները, վորովհետեւ, յեթե հեծելազորն ա-



Զիախաղացության դաս

րագաշարժ և, ուրեմն ինքնաթիռները շատ ավելի տրագաշարժ են և հնարագետ : Հազվագյուտ թշնամի ի վիճակի կլինի դիմանալ այդ տեսակ հարձակմանը և ըստ մեծի մասին հեծելազորի ավարն է դառնում :

Յերբ թշնամին տեղահան և յեղել և նուանդում է ,
ավիացիան հեծելազորի հետ հետապնդում և նրան ,
թույլ չառալով նրան հավաքել իր ուժերը մեծ զորա-
սուներով և պատրաստվել պաշտպանության համար :
Յեթե հակառակորդն իր հրետանին գուրս կբերի հեծե-
լազորի ընթացքը կանգնեցնելու , ավիացիան նետում է
իր ոումբները , ստիպելով հեռանալ գիրքից . և թույլ չի
տալիս վնասել հեծելազորին իր կակով :

Յերեմին նահանջող հակառակորդը ցանկանում է
դեռ անցնել այն կողմը , գրա համար նա պետք է անց
կենա կամքջից . այդ գեղքում ավիացիան թշնամու-
առաջը կտրում և կամքջի վրա և իր ոումբներով տակնու-
վրա անում կամուրջը :

Հակառակորդին մնում է կամ խեղդել դետում կամ
անձնատուր լինել :

Հեծելազորը շատ հաճախ գործում և յերկաթուզու-
և նրա կայարանների մոտերը : Յեթե հակառակորդն ու-
նի այստեղ զրահապատ դնացք , այս գեղքում նորքա ի-
րենց հեռահար ծանր հրետանիով հեծելազորին մեծ
կորուսներ են հասցնում և թույլ չեն տալիս մոտենա-
լու : Իսկ հեծելազորն իր հրետանիով նրանց հետ կովե-
րու հաճախ հնարավորություն չունի , վորովհետեւ հեծ-
յալ հրետանին այդքան մեծ տարածությունների վրա չի
կարող կրակել ինչպես զրահապատ դնացքների հրետա-
նին : Այստեղ գարձյալ սգնության և դալիս ավիացիան-
նու իր ոումբներով քարուքանդ և անում յերկաթգծի լի-
րը զրահապատ գնացքի առջեվում և յետեվում , յեր-
եմին հաջող կացնելով վնասում և և զրահահարթակնե-
րը , ոգնելով հեծելազորին հաղթահարությունը , իսկ յերեմին և յ
նրան գերի յե վերցնում : Քաղաքացիական պատե-

ըաղմի ժամանակ հեծելազորն ավխոցիսյի ողնությամբ շատ անզօմ դերի յե վերցրել ապիտակների գրահապատ գնացքներ :

Եազմա-Քիմիական միջոցները : Քիմիան ավելի շուա հանդիսանում է հեծելազորի թշնամին, քան թե բարեկամը, վորովհետեւ հեծելազորի դյուրաշարժությունն ու սրբնթացությունը խանդարում են նրան ողավել քիմիական միջոցներից ամրողջ լայնության վրա : Չե՞վոր, հակառակորդին թունավորելու համար, այսինքն այնպես անել, վոր նա դժվարությամբ կարողանա աշխատել այն շրջանում, վորտեղ նա ամրացել և կամ դարան և մտել, — հաղարավոր արկեր կամ քամու հոգողակ հոսանք և հարկավոր : Ին այս թե՛ մյուս դեպքերում ժամանակ և պետք, իսկ հեծելազորի ամբողջ զործողությունները կայանում են արագության ժեց : Հետո տեղանքը թունավորելով և հակառակորդին ոյզպիսով սոփիպելով նահանջել այզտեղից, հետապնդել նրան հեծելազորի համար հեշտ չի լինի, վորովհետեւ հենց ինքը պետք և անցկենա իր վաղերի շերտով, վրանք այնքան ել շուա չեն ցրվում, իսկ հակազազերով արդեն դրանից հետո զործելը, ի հարկե, այնքան ել հեշտ չի, ինչպես առանց հակազազերի :

Բայց իր քիմիական միջոցներով հեծելազորը կարող է առանձնապես լավ սովորվել նահանջի կամ պաշտպանության ժամանակ : Այդ դեպքերում հեծելազորը կարող է գաղերով թունավորել նեղ տեղերը, վորտեղից անցնելու յե հակառակորդը և դրանով կանգնեցնել նըրան : Դարող է գնդակոծել հրետանուց քիմիական կամ ծխալին արկերով հակառակորդի դիտակետերը կամ մարտկոցները և դրանով լուցնել նրանց : Համարու դրանով ել սահմանափակվում է քիմիայի սղնու-

թյունը հեծելազորին։ Այսկայն, հեծելազորի գեմ Հաւկառակորդը կարող է գործադրել իր քիմիական միջոց։ Ները մեծ հաջողությամբ, ուստի և պետք է ասել, ին հեծելազորն ինչպես և մաքառում թշնամու քիմիական միջոցների գեմ։

Այսուեղ ամենից առաջ հարկավոր է ասել, վոր քիմիական միջոցները հեծելազորին վնաս կարող են հասցնել միայն այն գեպքում, յեթե նրան վատ են ոռովորեցրել կամ թույլ ե կարդապահությունը։ Յեզ խոկապես յուրաքանչյուր ձիավոր հակազագեր ունի, վո-



Արգելքներից վոստելը։

Իսնք փառավոր պաշտպանում են գաղերից թե՛ իրեն և թե՛ իր ձիուն։ Նշանակում ե, վոր բանը միայն նրան նումն ե, վորպեսզի իր ժամանակին այդ զազերն հայտաբերել և շտապել հագնել հակազագերը։ Նրանցում թե՛ ձիավորը և թե՛ ձին գործում են բոլորովին ազատ, ինչպես և տոտնց նրանց։ Պետք է միայն վտրժվել հա-

կագաղին, ուստի հեծելազորը նրանցով աշխատութուն գործողություններին վարժվում և գեռ խաղաղ ժամանակ : Յեթե, որինակ, հակառակորդը դործ և ածել կայուն գաղեր, այսինքն այնպիսինները, վարոնք չեն ցրվում յերկար ժամանակ, այդ գեղգում զարական քիմիկ-ները, վարոնք կան յուրաքանչյուր զորամասում, իրենց դործիքներով խսկույն հայտաբերում են, վա՞րոնք և այդ գաղը, ի՞նչ անսակ և և վա՞ր չըջանն և նրանով վարակված : Հեծելազորը միայն այդ պատճառով փոքրինչ կանգ կառնի, քանի զեռ կատարվում և քիմիկ-ների հետախուզություն, խսկ հետո հակազազեր հագած կնեավի թունավորված տեղը կամ, սպամիելով իր արագընթացությունից, կանցնի նրա թիկունքը և իր խնդրի իրակուրծումն առաջ կտանի : Խսկ յեթե սավառնակից հեծելազորի վրա կնեավի քիմիական ռումը կամ բացված և հրետանային կրակ քիմիական արկերով, նա բաժան-բաժան կլինի վոչ մեծ մասների և հետո կհավաքվի առաջուց պայմանավորված համարական անդամում կամ ուղղակի կհեռանա :

Կարգացածն ավելի յավ յուրացնելու համար, պատասխանեցեք հետեւյալ հարցերին :

1. Ի՞նչ բան և հեծելազորի անհատական և խմբակային դենքը, և ինչո՞ւ յեն նա այդպես կոչվում :

2. Թիվեցեք անհատական դենքի տեսակները և մրտաբերեցեք, յե՞րբ և ի՞նչ պարագաներում և հեծելազորը նրանցով վարձում :

3. Հեծելազին ինչո՞ւ յե պետք սվինը :

4. Չիավորը յե՞րբ կարող և ձեռքի նոնակներով դործել :

5. Մատաքերեցեք, թե հեծելազորը կարող է հակառակորդի զրահապատ ավտոմոբիլների հետ կավել, իսկ յեթէ այդ չգիտեք, հիշեցեք, թէ վո՞ր զրբույկում տրդ մասին կարգալ:

6. Հեծելազորն ի՞նչ կերպ կարող է կովել հակառակորդի հետ, յեթէ նրան հեծյալ զրահով վերցնել չի կարելի:

7. Ի՞նչ ողնություն և ցույց տալիս հեծելազորին ավիացիան:

8. Ինչպես կարող է հեծելազորը կովել հակառակորդի քիմիական միջոցների դեմ:

ՃԵՇԵԼԱԶՈՐԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԸ

Հանդերձանքը—այդ այն ամենն է, ինչ մարտիկը կրում է իր վրա, չհաշված դենքը: Հեծելազորում ձիությունի հանդերձանքին ավելացված է նաև ձիասարքը: Զիաավորի ամբողջ հանդերձանքը կազմված է հետեւյալ առարկաներից:—

Հակագաղ.—Նա մարտիկին պաշտպանում է զագերից, վորոնք շատ հաճախ այժմ դործադրվում են պատերազմում:

Խալաք—քողարկ, այսինքն հաղուստ, վորը հնարավորություն և տալիս մարտիկին հակառակորդի աչքից թողնվել: Այն լինում է զանազան տեսակ: Ճմուանը—սպիտակ, զարնանը—չիկակարմիք, ամուանը—կանաչ՝ սև պտերով: Այս խալաքն հատկապես պետք է հաստիսության մեջ, դեսքում, պահակում:

Ռազմամթերք.—Յուրաքանչյուր ձիավոր կրում է իր վրա յերկու փամփշտի պայուսակներում և մեկ

փամփշտակարում Հրացանի 100 փամփուչա և ելի
ձեռքի յերկու նոհակ : Դա պետք է բավարարի մեկ որ-
վա մարտին :

Ամրաշինական զործիք .— Ամեն մի դատակում կան
մի քանի փոքր կացիններ և փոքր բաներ : Գործիքը
կրում են մի քանի ձիավորներ Հասուլկ կաշե շաղիկ-
ների մեջ , վորոնք ամբացրված են թամբերին :

Մնացած Հանդերձանքը—պարենը , խարը , սանի-
տարական ծրարը , կաթսայիկը , ձիու ծածկոցն և մյուս
առարկանները—արդեն մարտական նշանակություն չու-
նեն : Դրանցից ամեն մարտիկ ունի և կրում և թամբի
վրա , բեռում :

Զիասարքին են պատկանում . 1) զլիանոցը , այ-
սինքն սանձը , պախուրցը և պախուրցի թոկը , 2) թամ-
բը բեռի համար պատկանելիքներով և 3) ձիու Հակո-
ղապը :

Զիավորն ամբողջ զենքն և Հանդերձանքը կրում և
թե իր վրա և թե բեռում , խոկ այդ ամբողջը միատեղ
ձին և կրում : Միջին թվով ձիավորն ամբողջ զենքով և
լրիվ թամբվածքով կըում և մոտ 128 կիլոդրամ :
Անձրեւի ժամանակ այդ բոլորը թրջվում և և ավելի յի-
շանրանում : Այստեղից պարզ և , թե ձին վորպիսի
ծանը աշխատանք և կատարում : Ամեն մի Հեծելակ ,
վորն իր ձիուն սիրում և , միշտ աշխատում և թեթե-
վացնել նրա գրությունը լավ կերով , Հանդիսա տալով
և սիրով :

Մենք նայեցինք մարտիկ-ձիավորի Հանդերձանքը :
Բայց բացի զբանից , կա ամբողջ զորամասի Հանդեր-
ձանքը : Այստեղ մտնում են հետեւալիները .—


Փամփաւշտմեր, վորոնք կրում են ամեն հեծելա-
վաշտում փամփշտի հատուկ յերկանիվներում:

Պայքուցիկ գույք.—Գործադրվում ե պայթյուն
կատարելու համար. կրում են հատուկ պայթուցիկ
բեռներում, վորոնցից ունի ամեն մի հեծելավաշտ:

Կենսամբերներ.—Մարզկանց համար պարեն և
ձիերի համար խարը տանում են գումակում (ամեն
մի ձիավոր իր հետ ունի միայն 2 որվա պարեն և
1 որվա խարամթերք):

ՀԵՇՆԱՍՁՈՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Խնչ պետք և սովորած լինի ամեն մի հեծելակ,
վորպեսզի նա կարողանա հաջող կերպով կովել և
հաղթել թշնամուն:



Ճյուղի կարելը (քրով):

Առաջին, նա պետք և կարողանա լավ ձիավարել
հեծած: Նա ձիու վրա իրեն պետք և դդա այնպես,
ինչպես գհտնի վրա:

Յերկրորդ, նա պետք է կարողանա լավ տիրել
քրին և նիզակին: Նա պետք է ունենա ուժեղ, հաստա-
տուն ձեռք և աչքերով նշան տանի, վորագեսղի նա
կտրի և խոցի պինդ և հաստատուն:

Յերրորդ, նա պետք է կարողանա կովել վոչ
միայն հեծյալ, այլ և հետեւակ շարքում և լավ կովել:
Հեծելազորը հեծյալ շարքում յերկար կովել չի կա-
րող, վորովհետեւ ձիավոր մարտը կարճատե և (սրբն-
թաց և): Յեթե այդ մարտը տեսական է դառնում, այդ
դեղքում հեծելազորը պետք է ձիաթափ լինի և հետե-
վակ մարտը մզի արագ և խիզախ այն բանի համար,
վորագեսղի նորից ձիերն հեծնեն և վերջացնեն թշնա-
մուն սրազենով: Հասկանալի յե ուրեմն, վոր հետեւակ
մարտ մզելու համար նա պետք է շատ լավ վարժված
լինի:

Զարբարդ, նա պետք է կարողանա գլխուկ կրակել
թե հրացան, թե ձեռքի և հաստոցավոր գնդացիրներ:
Հեծելակի փամփուշտների ողաշարը մեծ չե, ուստի և
յեթե նա անտեղի հրաձգի, ուրեմն հաղթությունը չե
տանի:

Իսկ յեթե գիտուկ հրաձգի, նա շուտով թշնամուն
կտապալի և ձի կհեծնի, վորագեսղի հետապնդի նրան
և կոտորի:

Հինգերորդ, նա պետք է կարողանա լավ խնամել
իր ձիուն: Յեթե նրա ձին վատ և, ուրեմն չի յել հնա-
զանդվի նրան, հազիվ վոտերը կփոխի, և հեծելակը
կդառնա հետեւակ, և այն ել վատ հետեւակ, վորովհե-
տեւ կունենա ձի, վորին չի կարող ձգել:

Վեցերորդ, նա պետք է լավ տանի պահակային
ծառայությունը, այսինքն իմանու և լավ կատարի

դիտակալի, հետախռուցի, ժամապահի, դիտողի և
ձիավոր լրատարի պարտականությունները:

Յոթերորդ, նա ոլետք և քաղաքականապիս լավ
զբագեն լինի, այսինքն լավ ըմբռնի քաղաքական հար-
ցերը, հատկապես այն հարցերը, վորոնք կապված են
ոլատերազմի հետ: Զե՞ վոր հեծելազորը միշտ գըտ-
նվում և առաջամասում, նա առաջինն է, վոր ծանո-
թանում և թշնամուց աղատված տեղանքի, գյուղա-
ցիության և բանվորության հետ, և նայած այն բա-



Վուսյուն պատի վրայով:

Նին, թե հեծելազորի մասին ինչպիսի կարծէք կկազմի
ընակչությունը, այդպես ել կդատի ամբողջ կարմիր
բանակի մասին, նույնպես և այն մասին, թե արդյոք
Խորհրդային իշխանությունը լա՞վ է: Սա հատկապես

կարեոր և գյուղացիների նկատմամբ, վորոնք բոլոր
 յերկրներում ավելի թույլ են քաղաքական հարցերը
 չոկում, քան բանվորները։ Հեծելակը՝ լինի նա հետա-
 խուզությունում, յերթում, հանգստում, գյուղացիք
 միշտ ել քաղաքական հարցերի շարան են թափում, վո-
 րոնց նա պետք և պարզ ու հստակ պատասխաններ տա :
 Իսկ պատասխաննել կարող և զրադես և քաղաքականա-
 պես գաստիարակված մարտիկը : Ուսաի և այն քաղա-
 քական գասերը, վորոնք կարմիր բանակայինն անցնում
 և խաղաղ ժամանակ, նույնպես հանգիստանում են մար-
 տական պատրաստություն, և շատ կարեոր պատրաս-
 տություն։ Կարմիր բանակը խփում է, վոչ միայն
 գենքով, այլև խոսքով :

Վերջապես պետք ե ելի ցույց տալ, վոր թե հե-
 ծելակը և թե իր ձին ունեն հանգերձանք, վորը նա
 շատ լավ պետք ե իմանա և պետք ե կարողանա խնա-
 մել այն։ Նրա ունեցածը, սկսած նիղակից մինչեւ վեր-
 ջին ավզուկները, վորոնք դտնվում են թամբի վրա,
 պետք ե լինեն կանոնավոր, մաքուր և իրենց տեղում :
 Դատեցեք այժմ, թե հեծելակն ինչպիսին պետք ե լի-
 նի, վորպեսզի 2 տարվա ընթացքում կարողանա անց-
 նել իր ամբողջ գասընթացը :

ՀԵՄԵԼՍԶՈՐԻ ՀԱՄԱԼՐԱՒՄՆ ՈՒ ՆՈՐՈԳՈՒԹՅՈՒՆԸ

Նառայությունն ու մարտական աշխատանքի ա-
 ռանձնահատկությունները պահանջում են ձիավորից
 շատ ավելի, քան հետեւակից։ Սկսում է նրանով, վոր նա
 ամբողջությամբ անցնում ե այն բոլորը, ինչ անդ է

Կենում հետեակն իր պատրաստության ժամանակ՝
գրան պետք ե ելի ավելացնել ձիու հետ վարվեն և
սպասարկել հենց ձիուն, կարողանալ հեծած հիանալի
ձիավարել և դիտենալ հեծելազորի ծառայության և
աշխատանքի շատ առանձնահատկություններ։ Այսպի-
սով հեծելազորում ծառայությունը ծանր և բարդ է,



Կարմիր հեծելազորը զորահանդեսում

քան հետեակում։ Նա պահանջում և մարտիկից մեծ
աշխատանք, լայն պատրաստություն և Փիղիքական
մեծ ույժ ու տոկունություն, այնինչ ծառայության
ժամկետը, հեծելազորում այնքան ե, վորցան հետե-
վակում—միատեսակ է։ Ուստի և հասկանալի յե, վոր
հեծելազոր են ուղարկվում Փիղիքապես ավելի պինդ
մարդիկ, քան հետեակը, այսինքն բարձր, ճարպիկ,
լավ կազմվածքով, լավ տեսողությամբ և լսողու-
թյամբ, ճարդկությամբ, համառնակառնեամբ։ առա-

կունությամբ և գրադիտությամբ տղաներ։ Առաջին
չերթին, իհարկե, հեծելազոր են ուղարկվում նախկին
կազակների մարզերի բնակիչներին՝ (Դոնի, Կուրանի,
Տերսկի, Դաղստանի, Ռուսի, Ռենբուրդի և այլն),
այսինքն հենց նրանց, վորոնք մանկությունից բնաե-
լացած են ձիուն, հեծած ձիավարությանը։ Դա հնա-
րավորություն է ուղիս ծառայության մեջ քիչ ժա-
մանակ կորցնել յերիտասարդ մարտիկներին ծանո-
թացնել ձիու հետ և նրան վարժեցնել։

Բացի դրանից, շատ կարեւոր է, վոր հեծելազոր
դնան այնպիսի տղաներ, վորոնք արգեն անցած կլի-
նեն մինչ զարակոչչան պատրաստությունը։ Մինչ զո-
րակոչչային պատրաստության ժամանակ նրանք արգեն
վորոշ չափով ձեռք բերած կլինեն զինվորական գիտե-
լիքներ և հմտություններ, ուստի և նրանց համար ա-
զելի հեշտ կլինի այցպիսի կարճ ժամկետում ձեռք
բերել այն դիտությունը, վորը պետք է անցկենա ձիու-
վորը։ Մնում է միայն, վոր նրանք նախապես յուրա-
ցրածն ամրապնդեն և բնդլայնեն, իսկ զա մեծ ո-
պուտ է։

Նորեկ կարմիր բանակային-ձիավորների ուսու-
ցումը շատ հեշտացնում են նաև ՊԱԶԼ-Ավիաքիմի
ուղղմական գիտելիքների խմբակները, վորպիսիք կան
մեզ մոտ համարյա բոլոր գործարաններում, զավոդ-
ներում, գյուղերում և այլն։ Այդ խմբակների անդամ-
ները սովորում են հրաձգություն, ուսումնասիրում են
զենքը, դաշտային ծառայությունը, կանոնագրքերը,
և յեթե մոտիկ վայրում հեծելազոր և կանգնած և նը-
րանք նրանց հետ կապվել են, այդ դեպքում նրանք
կտրող են նույնիսկ հեծյալ ձիավարություն սովորել։

Ինքնին հասկանալի յե, թե ինչպես թեթև անց կկենա նորեկ կարմիր բանակայինի համար ծառայությունը, վորը մեկ-յերկու տարի արդեն աշխատել է այդ տեսակ խմբակներում։ Նրա համար ամեն ինչ հասկանալի յե, ամեն ինչ հեշտությամբ և ձեռք ըերում, և նրանից շատ շտու կարելի յե մշակել դիտուկից մարտիկ։

Ահա թե հեծելազորը գլխավորապես ինչպիսի մարդկանցով և լրացվում, կամ, այլ կերպ ասած, համալրվում։



Հրաձգություն ձիու յետնից։

Հեծելազորի միջին հրամկազմը դաստկի հրամատարից սկսած և բարձր, ինչպես և մյուս տեսակ զորքերի հրամկազմը, զորամաս են զալիս հեծելազորի նորմալ դպրոցներից։ Իսկ կրաները հրամկազմը—յուրաքանչյուր գունդ հենց ինքն և պատրաստում իր շարային կարմիր բանակայիններից։ Այդ տեսակ պատրաստության համար ամեն մի հեծյալ դնդում կա գընդային դպրոց։ Այդտեղ ուղարկվում են լավագույն, ավելի գրագետ և բանիմաց տղաներ, վորոնք, այդ դպրոցի դասընթացն անցնելով, ավարտում են վորպես

չոկերի հրամատարներ : Յերկամյա զինվորական ծառայությունն ավարտելուց հետո նրանք կարող են մնալ ծառայության մեջ ժամկետից ավելի , այն դեպքում նրանք կոչվում են «զերակետավորներ», ավելի սոճիկ են ստանում , քան ժամկետավորները , և կարող են առաջին հերթին ուղարկվել նորմալ դպրոց :

Այժմ այն ժաման , թե ի՞նչպես ե հեծելազորը լլրացվում ձիերով , կամ , այլ կերպ ասած , ի՞նչպե՞ս և նա նորոգվում :

Հեծելազորում վոչ բոլոր ձիերն են ժիատեսակ ծառայության տանում : Տարբեր ծառայությունների համար տարբեր ել ձիեր են պետք : Գումակի համար հարկավոր ե մեկ տեսակ ձի , շարքի համար , հեծնելու համար—այլ տեսակ , իսկ գնդացրի սայլակի համար—յերրորդ տեսակ : Այդ պատճառով ել հեծելազորի ծառայության համար ուղարկված բոլոր ձիերը բաշխվում են խմբերի , կամ , այլ կերպ ասած , կատեղորիաների :

Գումակի համար հարկավոր ե ուժեղ և տոկուն ձի , վորպեսզի կարողանա քաշել մեծ բեռ և յերկար աշխատել : Զե՞ վոր պատերազմում շատ հաճախ ստիպված ենք ուժերը լարել , յերկար ժամանակ առանց հանգստանալու : Այս կարգի ձին կարող ե լինել վոչ բարձր հասակի , բայց պինդ , ուստի և այդ կատեղորիայում կարելի յե վերցնել սովորական գյուղական ձիեր , բայց ի հարկե , առույդ , հալ և մաշ չեղած , լավ , կանոնավոր սմբակներով :

Այլ բան ե—հեծնելու ձին : Այստեղ արդեն պահանջվում ե արագություն , թեթևելություն , դյուրաշարժություն , տոկունություն , նվազ հոգնածություն :


Այդ տեսակ տշխառանքի համար նույնիսկ արտաքիւնով և հոգվածներին ամբողջովին բավարարող ձին ստիպված են դեռ յերկար ժամանակ վարժեցնել, ուստի շարային ձիով հեծելազորը սարքավորելը բոլոր բանակներում մեծ գլխացավանք և պատճառում : Մեղ մոտ, Միության մեջ, այդ դործը բարեբաղդաբար, բավական լավ և դրված, վորովհետև մենք ունենք նոնի ձին, վորը բավարարում և հեծելազորի բոլոր պահանջները : Լավ ձիեր կան նաև Կիրքիղիայի տափառաններում և Սէրիբում :

Ինչ վերաբերում և գնդացրային սայլակներին, չե վոր գնդացիրներն ել միշտ հետեւում են հեծելազորին, ուստի և սայլակների ձիերն ել պետք և ունենան շարային ձիու բոլոր հատկությունները : Բայց, բացի դրանից, գնդացրի ձին պետք և ունենա ուժեղ կուրծք, վորպեսդի աղաս քաշի սայլակը, այդ պատճառով ել գնդացրի ձիերը հեծելազորի ձիերից ծանր են :

Կարմիր հեծելազորը ձիերն ստանում և պետական ձիարուծարաններից : Այս ձիարուծարանները տեղափորված են գլխավորապես մեր Միության տափաստաններում, ունեն մեծ հողամասեր, վորոնցում ցանում են կերի լավ խոտաբույսեր, ուստի և բոլոր հնարավորություններն ունեն սնուցիլ և զաստիարակել շարային լավ ձիեր : Բայցի դրանից, ձիարուծարանի ձիերն աղնվացվում են արտասահմանի լավ արտադրողներով՝ բեղմնավորելու միջոցով : Ի հարկեն, ձիարուծարանի բոլոր ձիերը դանվում են անասնաբուժական խնամու հսկողության տակ :

Զորամասերը ձիեր են ստանում նույնպես գյուղացիներից գնելով և աղաս չուկայում առնելով . այդ

Գեղարվանիկան հեծելուզան :



աշխատանքը կատարում են հասուկ հանձնաժողով-ները և գորոնք կոչվում են նորոգչական-զնողական :

Զիերը հեծելազորն ստանում է 4 տարեկան հասակում և ծառայում են 10 տարի, այսինքն մինչև 14 տարեկան դառնալը : Ամեն մի հեծելավաշու - ընդհանուր առմամբ ունենալով 100 ձի, յուրաքանչյուր տարի ստանում է մինչև 10 գլուխ մատաղ ձի և շարքից գուրս բերում 10 հատ ծերերը :

Ծեր ձիերին սովորաբար շարքից տեղափոխում են դումակ, խոկ յեթե նրանք ընդհանրապես անպետք են ուղղմական ծառայության համար, ծախում են ձիազուրկ գյուղացիներին եժան գնով :

Հեծելազորում ծառայում են միայն զամբիկները և մալածները (կոսած) : Հեծելազորում հովատակ ունենալ չի թույլատրվում, վորովհետեւ նրանք կատապի յեն, կարող են ձիերին վիրավորել, զամբիկներին հղիացնել և շարքից գուրս հանել : Բայց դրանից նրանք շատ տաքարյուն են, ուստի և կարող են հետախուզության ժամանակ յերեան բերել թե իրեն և թե ձիավորին :

Ահա թե ինչպես և հեծելազորը նորոգվում : Բայց ինքնին հասկանալի յե, վոր հեծելազորը կարող է լավ ձիեր ստանալ և այնքան, վորքան իրեն պետք է, միայն այն դեսպում, յեթե մեր յերկրում ձիերի թիվը կազմեանա և կազնվանան նրանց ցեղերը : Այդ պատճառով Խորհրդային իշխանությունն արել և և անում և ամեն բան գյուղական ձիերի ցեղն աղնվացնելու : Զիարուժարաններ և բեղմնավորման կայաններ կան մեր Միության տամեն մի անկյունում : Այդ բոլորը քիչ ե : Հարկավոր և, վոր իրենք գյուղացիք սիրով յսեցին :

անասնաբուծական նյութերի մասին պրոցեսներ ուսուգով և՝ իրճիթ-ընթերցարանում, հարկավոր ե, վոր նրանց ձիերը հիվանդանալու զեպքում դիմեն վոչթե «հեքիմին» կամ ձիաբուժին, վորոնք փշացնում են ձիերը, այլ գնան անասնաբուժի մոտ, վորը յերկար ժամանակ սովորել ե և միայն նա կարող է ողնել գյուղացուն ձին բժշկելու գործում։ Գյուղացին իր դամբիկների բեղմնավորությունը պետք է կատարել տա բեղմնավորման կայանում լավ հովատակով, վորովեսղի լավ սերունդ ստանա, և վոչթե անդամարույժ-միժվածքներ։


Այս բոլորը գիտենալով, ամեն մի կարմիր բանակային, ում համար թանկ ե մեր Միության պաշտպանությունը, տուն վերադառնալով պետք և այդ տեսակետից ազդի իր համապյուղացիների վրա և իր սեփական տնտեսության որինակով ցույց տա, թե ինչպես կարելի յե ազնվացնել ձիերի ցեղերը դյուդացու տնտեսության մեջ։

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԵՇԵԼԱԶՈՐԸ

Ցուրաքանչյուր հեծելազոր կազմակերպվում և այնպես, վոր ցանկացած ձիավոր զորամասը կարողանա հաջող և հարմար կերպով մարտ մղել ինչպես հեծյալ, նույնպես և հետեւակ շարքում, այսինքն վորովեսղի նա հեշտությամբ և արագ կարողանա հեծյալ շարքից անցնել հետեւակի և ունենա այդ հետեւակ մարտի համար բավական թվով մարտիկներ։

Հեծելազորի ամենափոքր ստորաբաժանումը—ջոկն ե։ Ջոկերը լինում են քրավոր, այսինքն այնպի-


սիները, վորում մարտիկները զինված են անձնական հեծելաղորային զենքով (նիղակ, թուր, հրացան), և զնդացրային ջոկ, այսինքն այնպիսիները, վորոնց սպառազինումը կազմում է թեթև զնդացիրը: Յերկու թրավոր և մի զնդացրային ջոկեր կազմում են դասակ (տես ցածի նկարը): Ամբողջ դասակում կա 34 մարդ: Նրանցից՝ 1 դասակապետ, 1 նրա ոգնականը, ջոկի 3 հրամատարներ և 29 կարմիր բանակա-



Դասակի կազմը:

յիններ: Այս բոլորը մասնակցում են հեծյալ մարտին: Բայց յեթե հարկավոր և մարտ մղել հետեւակ շարքով, ոյդ գեղքում յուրաքանչյուր յերեք ձիու համար թողնվում է մի ծիապան, և հետեւակ մարտիկների քանակը համեմատած հեծյալների հետ նվազում և սուտավորապես մի յերրորդով: Դա կլինի սովորական ծիաթափում: Իսկ յեթե հարկավոր և ավելի շատ

Համեսթքան (Ալյուդ) կողմէն կազմութեց



մարդկանց ձիաթափ անել, այդ գեղագում մի ձիապահը մնում է յուրաքանչյուր վեց ձիու համար։ Դա կլինի ուժեղացրած ձիաթափում։

Հեծյալ շարքում զնդացիրը նշանառուն կրում է մեջքին, իսկ փամփաշտները գանվում են բեռնակիր ձիու վրա, վորին տանում և մշտապես տուանձին ձիապան (նկարում—վերջին տողանի ձախաթեյանը)։

Դասակները կազմում են հեծելավաշտեր, վոր համոզատասխանում և հետեւակ մասերի վաշտին։

Հեծելավաշտը հաշվվում և ամենավորը միավորը, վորը կարող և ինքնուրույն զործել։ Նա կազմված է 4 միատեսակ դասակներից։ Բացի վրանից, նրանում կա ելի դեկալար խմբակ, վորը կազմված և 6 մարդուց։ 4 կապավարներ, հեծելավաշտի հրամատարի 1 ձիապան և 1 փողհար (սա խմբի ավագն է)։ Յուրաքանչյուր հեծելավաշտ ունի իր զումակը, յերթի խոհանոցը, փամփաշի յերկանիվ և մի քանի տնտեսական սայլեր, պարեն և խար տեղափոխելու համար։ Յեթե հեծելավաշտը պետք և պայթեցնող աշխատանքներ կատարի, այսինքն կամուրջների, յերկաթուղիների վոշնչացումն և այլն, այդ գեղագում հեծելազորում յեղած պայթեցնող բեռը լրացվում և պայթուցիկ նյութերով և միացվում և շարքին։

Թրավոր չորս հեծելավաշտ կազմում են հեծյալ գունին։ Բացի այդ, թրավոր հեծելավաշտերից զնդի կազմում մտնում ե ելի մեկ զնդացըրային հեծելավաշտ։ Այդ հեծելավաշտում կա 16 զնդացիր։ Գնդին տրվում ե ելի մի կապի դասակ հեռախոսի անհրաժեշտ գույքով։ Բացի վրանից, կան այլ սպասարկող

մասեր, ակումբ, անահսական խումբ, նվազախումբ, ունիտարական և անառնաբուժական տկարանոց :

Մանոթանալով հեծելազորի հանդերձանքի, պատրաստության, համալրման և կազմակերպվան հետ, պատասխաննեցեք հետեւյալ հարցերին .

1) Ի՞նչո՞ւ հեծելակին հարյուրից ավելի վամփուշտ չի տրվում :

2) Զիավորին ինչո՞ւ յեն պետք խալաթ-քողարկը և ամբաշինական գործիքը :

3) Հեծելակը վորքա՞ն պարեն և խար ունի :

4) Ի՞նչն և կազմում ձիասարքը :

5) Ի՞նչ պետք և գիտենա և կարողանա անել ձիուգորը :

6) Ի՞նչո՞ւ ձիավորին հարկավոր և քաղաքական ժեծ զարգացում :

7) Ի՞նչպիսի՞ մարդիկ են նշանակվում հեծելազոր :

8) Ի՞նչ նշանակություն ունի հեծելազորի պատրաստության համար մինչզինակոչային պատրաստությունն ու ՊԱԶԲ-Ավիաքիմը :

9) Ի՞նչպե՞ս և լրացվում հեծելազորի հրամկազմը :

10) Ի՞նչպե՞ս պետք և մտնել նորմալ դպրոց :

11) Ի՞նչպիսի՞ ձիեր են պետք հեծելազորին :

12) Ի՞նչո՞վ և ի՞նչպե՞ս հեծելակ-արձակուրդավորը կարող ե ոգնել գյուղացու տնտեսությանը :

13) Քանի՞ և ի՞նչպիսի՞ ջոկից և կազմված հեծելազորի դասակը :

14) Ի՞նչպիսի՞ մասեր, բացի թրավոր հեծելավաշտերից, մտնում են հեծելազնդի մեջ :

15) Ի՞նչ բան և զեկություններից հեծելավաշտում, և նա ինչպիսի՞ աշխատանք ե կատարում:

ՀԵՇԵԼԱԶՈՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հեծելաղորի գլխավոր հատկություններից մեկն ել, ինչպիս այդ արդեն հայտնի յե ընթերցողին, հանդիսանում ե նրա ինքնուրույնությունը, այլ կերպ առած, կարողանալ մարտ մղել ցանկացած հակառակորդի հետ, ցանկացած պարագայում և ցանկացած շարքում, հեծյալ կամ հետեակի: Այս պատճառով ել այն խնդիրները, վորոնք տրվում են հեծելաղորին, կարող են չառ տարբեր լինել: Բայց նրա առավելագույն խնդիրները, վորոնց կատարմանը բոլորից ավելի և չառ լավ հարմարեցված են, դա—հետախուզությունն ե, թշնամուն հետապնդելն ե, նահանջը ծածկելն ե և ասպատակությունն ե: Քննենք այդ խնդիրները կարգով:

Հետախուզությունը հանդիսանում և հեծելաղորի գլխավոր խնդիրներից մեկը: Մարտի հաղթանակը տանելու համար, ավագ պետը պետք և մանրամասն տեղեկություններ ունենա իր հակառակորդի մասին. նրա քանակը վորքա՞ն ե, ի՞նչ զորամաս ե (հետեակ, հեծելաղոր), վորտեղ և տեղավորված, ի՞նչ և մտադիր աննլու, վորտեղ են նրա ոժանդակ ուժերը, շտարները, հրետանին և այլն: Մի քանի տեղեկություններ նա ստանում ե ավիացիայից, բայց ամենաճիշտը հեծելաղորից: Ամենաճիշտն ենք ասում, վորովհետե հեծելաղորը վոչ թե դիտում ե թշնամուն, այլ շոշափում ե նրան, մարտի դուրս կանչելով, ստիպելով, վոր նա իրեն ցույց տա և դերիներ վերցնելով: Բայց

դրանից, Հեծելազորից տեղեկություններ են հասեռ պետքն հենց մարտից առաջ, ուստի և նրանք ամենից թարմ են¹⁾:



Հետախուզություններ:

Հետապնդում.—Տեսական մարտից հետո հետեւ վակին հաջողվում է վերջի վերջո խորտակել թշնամու դիմադրությունը, բայց հետեւ այլ չաճախ այնքան հոգնում ե, վոր չի կարողանում հետապնդել նահնջող թշնամուն։ Այդ ժամանակ նրա վրա հարձակ-

¹⁾ Հեծելազորի հետախուզության մասին մանրամասն կարելի յե կարդալ «Կարմիր բանակայինի գրադարանի» սերիայի հետեւյալ գրքերում։ Յեւ Շեյդեման, «Հեծելազորի հետախուզությունը», Միկուլին, «Հուշատեսր առանձին հեծելազորետքի հրամատարի»։ ԴիԶ, 1927։

վում ե հեծելազորը։ Նա նրան քշում ե , հնարավորություն չտալով կանգ առնելու և պաշտպանության անց կենալու , վոչնչացնում ե նրան կամ զերի յե վերցնում։ Հետապնդման այդ խնդիրը հեծելազորը պատերազմում կատարում ե շատ հաճախ։

Յերբ 1919թ. Կարմիր բանակն անցավ հակա-հարձակման , մինչև Տուլա հասած զեներալ Դենիկինի սպիտակ բանակի ղեմ , ջարդված սպիտակ զվարդիականները կամ ենում եյին Ույոլից յետ քաշվել մի փոքր կամ մինչև Կուրսկ , այդտեղ բանդ լինել , ուակայն նրանց զեմն ուղղվեց ընկ . Բուգյոննու ամրող ծիա-վոր կորպուսը։ Մեր Կարմիր հեծելազորը կրնկակոխ հետապնդեց սպիտակներին և , նրան հարված հարվածի յետերց հասցներով—Վորոնեժի տակ , հետո կաստոր-նայի տակ , առանց դադարի քշեց նրանց մինչև Ռոս-տով։ Իր միալար հետապնդումով ընկ . Բուգյոննու հեծելազորը Դենիկինի բանակը կատարյալ ուժաս-պառման հասցրեց , այնպես վոր նա չկարողացավ նույնիսկ Ռոստովում բանդ լինել , ունենալով այն-պիսի լայն և դժվար հաղթահարելի արզելքներ պաշտ-պանության , ինչպիսին Դոնն և , և հարկադրված եր քաշվել Նովորոսսիյսկ։ Այստեղ սպիտակների մեծ մասն անձնատուր յեղավ , և միայն շատ անշահն մասը կարողացավ նավ նստել և փախչել Ղրիմ։

Միևնույն բանը պատահեց լեհական ճակատում 1920թ.։ Յերբ մենք հարձակման անցանք , մեր արե-մտյան ճակատի աջ թեռում կովում եր ընկ . Գայի հեծյալ կորպուսը։ Լեհերին տեղահան անելով , այդ հեծելազորը հետապնդեց թշնամուն , թույլ չտայով նրան կանդ առնել մինչև իոկ այնպիսի ամրություն-

ներում, ինչպիսին Գրողնո բերդն է : Մինչև Վիստան
հեծելազորը հետապնդեց լեհերին, և միայն մեր ամ-
րողջ բանակի ընդհանուր յետ քաշվելը դադարեցրեց
հետապնդումը :

Յետխաղացուրյան պաշտպանությունը .—Բայց
մարտը յերբեմն վերջանում է հակառակորդի համար
հաջող : Մեր զորքերը յետ են քաշվում մեծ կորուսո-
ներով : Ո՞վ կարող է ոգնել նրանց հանդստանալու և
իրեն կարգի բերելու :



Նածկարանում :

Այդ դեպքում յետխաղացության պաշտպա-
նության խնդիրը դրվում է հեծելազորի վրա : Հեծելա-
զորը բանդ և անում հետապնդող թշնամուն մի տե-
ղում, ճիաթափվում է, յերբ հարկավոր ե, ապա կր-
տրվում նրանից և յետ ե թռչում նոր, առաջուց ըն-
տրված տեղը, այստեղ կռվում է և այլն :

Այդ միջացում հետեւակն իրեն կարգի յե բերում ,
հանդատանում և և համալրվելով , ինքն անց և կենում
վճռական հարձակման :

Ահա այստեղ և հարկավոր և հեծելազորին այն
հատկությունը, վորք վերեվում կոչեցինք— ինքնու-
րույնություն։ Զե՞ վոր հետեւվակի յետ քաշվելը ծած-
կելով, նրա ոգնության վրա հույս դնելու կարիք չկա։
Այստեղ հեծելազորն ամենից շատ կփորձի հետեւվակ
շարքերում։ Այստեղ ավելի քան վորեւ տեղում
նրան հարկավոր կլինեն դնդացրերն ու թնդանոթները,
իսկ գլխավորը— կարողանալ լով կովել հետեւվակ
շարքում։

Ասպատակուրյուն (բեմ) : Այժմ բանակն
ոնի շատ ավելի հանդերձանք, տեխնիքական միջոցներ,
գնդացրեր, թնդանոթներ, ավտոմոբիլներ տանկեր,
սավառնակներ, լուսարձակներ և այլն : Այդ բոլորը
նա կստանա միայն այն դեպքում, յեթե նրա թիկունքը
կաշխատի կանոնավոր :

Այդ պատճառով, յուրաքանչյուր բանակի համար ծայր աստիճան կարեոր ե թիկունքի կանոնավոր աշխատանքը, և յուրաքանչյուր բանակ, պաշտպանելով իր թիկունքը, ձգտում է խորտակել հակառակորդի թիկունքը, դժվարացնել նրա աշխատանքը :

Ի՞նչպես կարելի յե թշնամու թիկունքի աշխատանքը դժվարացնել :

Ամենից առաջ, ի հարկե, կործանելով այն գործարաններն ու զավողները, վորոնք պատրաստում են ուղարկան հանդերձանքի առարկաները։ Հետո պահեստները վոչնչացնելով, վորտեղ այդ առարկաները պահպատճենում են, վոչնչացնելով կամ փշացնելով կամուրջներ,

կայաբաններ, յերկաթուղիններ, վորոնցով բանակին շարկավոր մթերքները և առարկանները թիկունքից ահղափոխում են ճակատ և այլն:

Դա զործի մի կողմն և : Յերկրորդ կողմն այն է, վոր պատերազմը— զասակարգային զործ և : Մեր, սպիտակ լեհերի հետ ունեցած պատերազմի ժամանակ մենք կովում ենք վոչ թե լեհ ժողովրդի հետ, այլ լեհաստանի կապիտալիստների դեմ : Զնայած նրանց կողմից խարնված լեհաստանի աշխատավորները թեև կովում ենք մեր դեմ ճակատներում, բայց լեհական աշխատավոր բնակչության մասսաների մեջ, պատերազմի ընթացքի հետ, անեց կովի դեմ անբավարկանություն և հասկացողություն, վոր լեհաստանի աշխատավորության համար խորթ են նրա խնդիրները : Այդ անբավականությունը լեհական աշխատավորներին հասցըն բաց յելույթների իրենց բուրժուական կառավարության դեմ Գալիցիայում և Բելուռուսիայում : Այդ ել ավելի ովարդ յերեաց մեր ունեցած քաղաքացիական պատերազմի ժամանակ սպիտակ զեներալների հետ : Նրանց թիկունքում առաջ ենք դալիս և աձում ենք դյուզացիական և բանվորական շատ ապստամբություններ, վորոնք ցնցում ենք սպիտակների թիկունքը :

Այդ տեսակ յելույթները չատ վտանգավոր են հակառակորդի համար և շատ ձեռնառու յեն մեղ համար : Սակայն բնակչության մեջ համակրող գասակարգերն իրենց աշխատանքում ճնշված են թշնամի բանակի ողակում, նոքա գտնվում են իշխանության հսկողության տակ, նրանք անդեն են, նրանց կազմա-

կերպելը դժվարացել է, և նրանց մենք մի կերպ պետք ենք նենք :

Թիկունքի աշխատանքը դժվարացնելու և թշնամու ճակատը թուլացնելու ամեն այդ տեսակ գործունելություն, բնակչության մեզ համակրող դասակարգերի աջակցությամբ, չնորհիվ՝ դրան, յերբեմն հանձնվում և հեծելազորին։ Հեծելազորը, չնորհիվ իր գյուրաշարժության ձեղքում, անցնում և թշնամու թիկունքը, կործանում և նրա յերկաթուղիները, կայարանները, կամուրջները, բազանները, հարձակվում և ողանավակայանների վրա, վոչնչացնում և սավառնակները, կտրում և հեռախոսային և հեռազբական կազը, ցրվում և բարձր շտարները, վոչնչացնում և գումակները և ազա վերադադիւմ և իր բանակը։ Հակառակորդի թիկունքում այդ տեսակ աշխատանքը կոչվում և ասպատակություն¹⁾։ Այդ տեսակ ասպատակություններով առանձնապես հարուստ և 1918—1920 թ. թ. քաղաքացիական պատերազմը և 1920 թ. սպիտակ Լեհաստանի հետ պատերազմը։

Սպիտակ գեներալ Մամոնտովը 1919 թ. իր հեծելազորով կատարեց այդպիսի մեծ ասպատակություն մեր թիկունքում, հասցնելով մեզ հսկայական վիճակ։

Մեր հակահարձակումը լեհերի դեմ սկսվեց նույն-

1) Հեծելազորի ասպատակության մասին մանրամասն և մեր հեծելազորի ամենախոշոր ասպատակության մասին կարելի յե կարդալ Պոպովի—«Հեծելազորի ասպատակությունները», «Կարմիր բանակայինի դրադարանի» սերիայից գրքույկում։ Դիջ 1927։


պես չեկ . Բուդյոննու 1-ին հեծյալ բանակի ասպարամ-կությամբ Ժիտոմիր-Շերգիչեկ վրա : Այդ ասպարա-կության շնորհիվ լիւրին անմիջապես թողեցին Կիե-վր և շտագ յետ քաշվեցին Կորոստեն :

Ասպարակության կատարմամբ գերազանցեցին ընկ . Պրիմակովի շերվաննի կազմակները — 8-րդ Կովկա-դիվիզիան : Նա ասպարակությամբ ճեղքեց սպիտակ-ների Ֆատեժ-Պոնիրի (Որլովի տակ) ճակատը : Լե-հական ճակատում դարձյալ նույնարդեց Պրոսկուրովի և Զյորնից-Ռոտրովի վրա առաջատակություն , վեր-ցւեց 500 վագոն գուցքով բևեռավորված և նրան մի մո-ռը բաժանեց չքաղլոր գյուղացիներին , ցրիվ տվեց լե-հական շտարը և սահմեց նրան սկսելու յետ քաշվել :

1919 թ . գեներալ Սեկրետերի Դոնի սպիտակ հեծե-շաղորն ուղղված եր ռազմատակության մեր թիկուն-րում ապստամբված վեշենսկու և Միգուլինսկի ստանիցաների Դոնի կռազմակների հետ միանալու : Սեկ-րետեր ճեղքեց մեր ճակատը , միացավ ապստամբներին , վորով նշանակալից չսփոռվ ոգնեց նրանց :

Մակայն , ամենից շատ այդ տեսակ ողնություն ցույց ե տվել Կարմիր հեծելազորն սպիտակ գեներալ-ների թիկունքում՝ ազստամբներին : Կարմիր հեծելա-զորի ոգնությամբ հսկայական շրջաններ հակառա-կորդի թիկունքում բանկվեցին այսպես կոչված պար-տիզանական շարժումով : Գյուղացիք անբավական կալ-վածատերերի վերադարձով և հողի յետ գրավմամբ , վորը Խորհրդային իշխանությունը բաժանել եր դյուղացոց , ապստամբվում ելին , քաշվում ելին ան-տառները , կազմակերպում ելին վոչ մեծ պարտիզանա-կան ջոկատներ և իրենց գյուղացիական վողորմելի քիե-

մասոնական օվերմինիլ վյուծակ



րով, շատ հուճախ թամբի փսխարեն բարձերի վրա նստած, կատարում եյին իրենց մեծ զործն սպիտակ բանակի թիկունքը քայքայելով։ Դրանով նրանք իրենց հերթին շատ ովնեցին Կարմիր բանակին ջարդելու սպիտակ գվարդիականներին։

Գիտենալով հեծելազորի խնդիրները, կարելի յե հասկանալ, թե հեծելազորն ինչպիսի տեսակներ ունի։

Այն հեծելազորը, վորն ինքնուրույն մեծ խնդիրներ և կատարում, որինակ՝ ծիավոր զորամասերի մորելիզացիայի ծածկելը, նրանց բացազատումը պատերազմի սկզբում, խոշոր ասպատակությունը, — կոչվում և ուղղմավարական կամ այլ կերպ—բանակային հեծելազոր։ Այդ տեսակ հեծելազորը միացվում է առանձին հեծյալ բրիգադներում, զիվիզիաններում, կորպուսներում և մինչև անզամ հատուկ ծիավոր բանակներում, ինչպես որինակ՝ մեր Կարմիր հեծելազորը քաղաքացիական պատերազմին։

Հեծելազորի մյուս տեսակը, վոր տրված և, հետեւ վակ գնդերին և դիվիզիաններին, զործում և վոչ թե հետեւակից առանձին, այլ նրա հետ ձեռք ձեռքի տված և պահվում են վոչ մեծ զորամասերով, — կոչվում է զորական հեծելազոր։

Բանակային հեծելազորի քանակը յուրաքանչյուր առանձին բանակում կամ ճակատում կարող և տարրեր լինել։ Իսկ դիվիզիական հեծելազորի քանակը մեր հետեւակ մասերում վորոշ և հետեւակ զնկում— հեծյալ հետախույզների մի զասակ, մոտավորապես 40 ծիավորներով, հետեւակ դիվիզիայում— առանձին հեծելավաշտ, վոր կազմված և այդպիսի չորս դաստիներից, ինչպես և բանակային հեծելազորում։

Միանդամայն պարզ է, վոր այդպիսի վոչ մեծ հեծ-
յալ զորամասը չի կարող ի կատար ածել այն ժարտա-
կան խնդիրները, ինչպես բանակային հեծելազորի խո-
չոր զորամասերը։ Ուստի և զորական հեծելազորի ՎԵՐ-
ԽԱՊՈՐ խնդիրը— հետախուզությունն ե։ Բայց նա
յերեմն և՛ հետապնդում ե և՛ մինչեվ իսկ գրոհում ե
հեծյալ շարքում։

Զորական հեծելազորի հեծելակները պատրաստ-
ված, հանդերձված ե զինված են ճիշտ այնպես,
ինչպես բանակայինը։ Յերկուսի ծառայությունն ել
հավասարառչափ ծանր և, ուստի և նոքա համալրվում են
զորակոչիկների միատեսակ կազմով։

Բացի բանակայինի և զորականի բաժանվելուց, հեծելազորը ճիշտ այնպես, ինչպես և հետեվակլը, բա-
ժանվում են բնակազմայինի (կադրային) և յերկրա-
յինի։

Կադրային հեծելազորը խաղաղ ժամանակ պահ-
վում է լրիվ կազմով, ուստի և ցանկացած բոպեյին
կարող և պատերազմ դուրս գալ։ Պատերազմի սկզբում,
բանակը մորիլիքացիայի յե յենքարկվում, այսինքն՝
յերբ բոլոր պահճառատիները բանակ են մտնում, տեղի յե
ունենում նոր զորամասերի կազմակերպում, և ընդ-
հանրապես ամբողջ բանակի անցումը պատերազմա-
կան դրության, — կադրային հեծելազորը ծածկում է
այդ մորիլիքացիան։ Դրա համար խաղաղ ժամանակ
նրան տեղավորում են սահմանամերձ շերտում։

Կադրային զորական հեծելազորը խաղաղ ժամա-
նակ նույնպես պահվում է լրիվ կազմով և յերթի յե
դուրս գալիս հետեւակ զորամասերի հետ միասին։

Յերկրային հեծելազորը խաղաղ ժամանակ պահ-

վում ե վոչ լրիվ կազմով : Նա կազմակերպվում ե ժորիլիգացիայի օրերին, իսկ նրա ձևակերպման համար խաղաղ ժամանակ պահպառմ են միայն կազմքրը, այսինքն՝ հրամկազմը և մի քանի մարտիկներ ամեն մի հեծելավաշոի համար : Մնացած կարմիր բանակայինները և հրամկազմը դայխ են ժորիլիգացիայի ժամանակ իրենց ձիերով այն զորամասերը, վորոնց վրա խաղաղ ժամանակ նրանք գրված են և վորոնցում նոքանցել են վարժական հավաքը :

Կարդալով հեծելազորի մարտական աշխատանքի զլուխը և նրա տեսակների մասին, պատառխանեցեք հետեւ հարցերին .


1) Ի՞նչ տեսակ է հեծելազորի զլուխը աշխատանքը պատերազմում :

2) Ի՞նչ կարող է հեծելազորը հետախուզության մեջ անել, վորը չի կարող անել ավիացիան :

3) Մտածեցեք այն մասին, ի՞նչպես պետք է հեծելազորը յետ քաշվի հետեւակի պաշտպանության տակ նահանջի ժամանակ :

4) Մտածեցեք այն մասին, թե յի՞ր ասպատակությունը հաջող կլինի :


5) Մտաբերեցեք այն, ի՞նչպիսի հարցեր հեծելազորի մասին մնացին չլուսաբանված այս գրքույկում և վո՞ր զրքույկներում նրանց մասին կարելի յէ կարդալ :



Յ Ա Ն Կ

b2

Հեծելազորի հատկությունները	3
Ինչո՞վ ե զինված հեծելազորը	15
Հեծելազորի հանդերձանքը	33
Հեծելազորի պատրաստությունը	35
Հեծելազորի համարումն և նորոգությունը	38
Ինչպե՞ս ե կազմակերպված հեծելազորը	46
Հեծելազորի մարտական աշխատանքը	51



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039202

[124]

A 1
4194

ԳԻՆԸ 30 ԿՐՊ.